ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՆՊԱՍՏԱՌՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Երևան 2019

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

LDRC
ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՆՊԱՍՏԱՌՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

LDRC
ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ 2019

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Տեղական ժողովրդավարության զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պաշտպանված նպաստառու ընտանիք և իրազեկ քաղաքացի» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Տեղական ժողովրդավարության զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Մեր երախտիքի խոսքն ենք հղում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, սոցիալական աջակցության տարածքային բաժինների (ՍԱՏԲ) ներկայացուցիչներին, ոլորտի փորձագետներին, հասարակական կազմակերպություններին, գործատուներին և նպաստառու ընտանիքների անդամներին, ովքեր մեծապես օժանդակեցին ծրագրի արդյունքների ապահովմանը:

Հեղինակներ՝
«Պաշտպանված նպաստառու ընտանիք և իրազեկ քաղաքացի» ծրագրի փորձագետներ
Շուշան Ղահրիյան
Օֆելիա Գրիգորյան

Խմբագիր՝
Գերասիմ Բարսեղյան

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Բովանդակություն

Ներածություն 3

Պետական նպաստների համակարգի իրավական կարգավորումը 7

Իրավիճակի նկարագրություն 19

Հետազոտության մեթոդաբանություն 26

Հետազոտության նպատակն ու խնդիրները 26

Հետազոտության մեթոդները 27

Հետազոտության ընտրանքը 28

Սոցիալական ոլորտի ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների հետ իրականացված խորին հարցազրույցների արդյունքների վերլուծություն 30

Նպաստառու ընտանիքների անդամների մասնակցությամբ ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների վերլուծություն 53

Գործատուների հետ անցկացված խորին հարցազրույցների արդյունքների վերլուծություն 79

Եզրակացություն 89

Առաջարկներ 95

Վերջաբանի փոխարեն 98

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

LDRC
ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՅՍԱՆ ԵՎ ԶԵՏԱՀՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Ներածություն

Սույն հետազոտությունն անցկացվել է 2019թ. մարտ-ապրիլ ամիսներին «Տեղական ժողովրդավարության զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (տեքստում՝ ՏԺՋՀԿ) մասնագիտական թիմի կողմից: Այն իրականացվել է ԵՄ-ի ֆինանսավորմամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի ղեկավարությամբ կոնսորցիումի կողմից գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում: Հետազոտությունը ՏԺՋՀԿ-ի կողմից իրականացվող «Պաշտպանված նպաստառու ընտանիք և իրազեկ քաղաքացի» ենթադրամաշնորհային ծրագրի առանցքային բաղադրիչն է, որն ապահովում է ծրագրի հիմնական արդյունքները:

Սոցիալական աջակցության ոլորտում, ընդհանրապես, և պետական նպաստների համակարգում, մասնավորապես, առկա են ինչպես բացահայտ, այնպես էլ քիչ հանրայնացված, սակայն անմիջականորեն քաղաքացիների իրավունքներին և շահերին առնչվող խնդիրներ: Դրանց շարքում առանձնանում է նպաստառու ընտանիքների՝ սոցիալական աջակցության համակարգից դուրս մնալու խնդիրը՝ նրա (նպաստառու ընտանիքի) անդամներից որևէ մեկի աշխատանքի անցնելու պատճառով: Մի կողմից քաղաքացին անցնում է աշխատանքի և, թվում է՝ ծանրակշիռ քայլ է կատարում իր ընտանիքի սոցիալական վիճակի կայունացման տեսանկյունից, սակայն, մյուս կողմից, այդ փաստով պայմանավորված նպաստից զրկվելը, բնականաբար, չի կարող բացասաբար չանդրադառնալ այդ նույն ընտանիքի վիճակի վրա: Այս խնդիրը հաշվի առնելով՝ ծրագրի հիմնական նպատակներ սահմանվեցին. նպաստառու ընտանիքների շահերի, նրանց անդամների իրավունքների պաշտպանության հարցում գործատուների, սոցիալական ոլորտի ներկայացուցիչների (սոցիալական աջակցության

տարածքային բաժիններ) դերի գնահատումը՝ նպաստառու ընտանիքի անդամների աշխատանքի անցնելու հետ կապված խնդիրների հաղթահարման հարցում (1), նպաստառու ընտանիքների շահերի և նպաստառու քաղաքացիների իրավունքների պաշտպանության հարցերում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հիմնարար առաջարկների մշակումը (2) և պետական նպաստների համակարգի բարելավմանն ու արդարության մակարդակի բարձրացմանն ուղղված թիրախային առաջարկների մշակումը և պատկան մարմիններին ներկայացումը (3):

Սահմանված նպատակների իրագործմանն է ուղղված նաև սույն հետազոտությունը, որի շրջանակներում Երևանում և Գյումրիում իրականացվել են խորին հարցազրույցներ սոցիալական ոլորտի ներկայացուցիչների, ոլորտի փորձագետների և գործատուների հետ, ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումներ՝ նպաստառու ընտանիքների անդամների մասնակցությամբ: Հետազոտությունն անդրադառնում է նպաստառուների/նպաստառու ընտանիքների նպաստների համակարգին տեղեկացվածությանը, մասնավորապես, նրանց իրավունքների ու պարտականությունների, արտոնությունների ու ընթացիկ փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև իրազեկման գործընթացում սոցիալական ոլորտի ներկայացուցիչների (ՍԱՏԲ) դերի գնահատման հարցերին: Հետազոտության առանցքում են նաև նպաստառու քաղաքացիների աշխատանքի փորձառության, գործատուների՝ նպաստառու աշխատակից ունենալու փորձառության, նպաստների համակարգի հանդեպ վերաբերմունքի և նպաստների համակարգում հնարավոր փոփոխությունների խնդիրները:

Այս վերլուծական տեղեկանքի ներածական մասում ներկայացված է իրավիճակի ուսումնասիրությանը վերաբերող բաժինը, մասնավորապես, վերջին երեք տարիների ընթացքում վերոբերյալ խնդիրներին անմիջականորեն ու միջնորդավորված առնչվող նշանակալի հետազոտությունները և իրավական

կարգավորումները: Հետազոտության մեթոդաբանության նկարագրությունն ու հետազոտության արդյունքների վերլուծությունը հաջորդ բաժնի բովանդակային նյութն են: Ընդհանուր առմամբ, հետազոտությունը երկու հիմնական մեծ խնդիրների վրա է կառուցվել՝ նպաստառու ընտանիքների տեղեկացվություն և նպաստառու ընտանիքների անդամների աշխատանքի անցնելու հետ կապված իրավիճակի գնահատում:

Հետազոտության արդյունքների վերլուծության առաջին մասում ներկայացված է սոցիալական ոլորտի ներկայացուցիչների և փորձագետների հետ իրականացված հետազոտության (խորին հարցազրույց) արդյունքների ամփոփումը, որում ներկայացված են նպաստառու ընտանիքների իրազեկվածության, աշխատանքի անցնելու և տարբեր իրավիճակներում նպաստից զրկվելու և այդ համակարգում նորից վերականգնվելու հնարավորության, աշխատանքի խրախուսման համատեքստում նպաստների համակարգի հնարավոր փոփոխությունների վերաբերյալ խնդիրները:

Հաջորդ բաժնում ներկայացված է նպաստառու ընտանիքների անդամների մասնակցությամբ իրականացված ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների ամփոփումը: Դրանց շրջանակներում քննարկված հարցերը վերաբերել են երեք հիմնական թիրախային ուղղությունների՝ նպաստ ստանալու փորձառություն, նպաստների համակարգի վերաբերյալ տեղեկացվածություն և ընտանիքի սոցիալական կարգավիճակի փոփոխություն՝ նրա անդամներից որևէ մեկի աշխատանքի տեղավորման համատեքստում: Քննարկումների մասնակիցներն անդրադարձել են նաև նպաստների համակարգի թերի կողմերին և առաջարկներ ներկայացրել դրանց հաղթահարման ուղղությամբ:

Վերլուծության հաջորդ մասում ներկայացված է գործատուների հետ իրականացված հարցազրույցների արդյունքների ամփոփումը, որտեղ մեծ շեշտադրում կա

աշխատանքի ընդունման գործոնների և առաջնահերթությունների, նպաստառու ընտանիքներից աշխատողներ ընդունելու, գրանցելու/չգրանցելու խնդիրների, նպաստների համակարգի հնարավոր փոփոխությունների վրա:

Վերլուծական տեղեկանքն ամփոփվում է եզրակացությունների և առաջարկների բաժնով, որում ուսումնասիրության արդյունքների վրա հիմնված՝ ներկայացված են ոլորտի բարելավմանը և նպատակային փոփոխություններին ուղղված մի շարք կարևոր առաջարկներ:

Պետական նպաստների համակարգի իրավական կարգավորումը

«Պետական նպաստների մասին» ներկա իրավիճակի նորմատիվային ապահովումը

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 12-ին և ուժի մեջ մտել 2014թ. հունվարի մեկից: Օրենքով կարգավորվում է ՀՀ-ում պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանվում պետական նպաստի հասկացությունը, տեսակները և տրամադրման կարգը:

Պետական նպաստը պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է, որի տրամադրման նպատակն է՝

1) անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը,
2) ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը,
3) ժողովրդագրական իրավիճակի բարելավումը,
4) սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով սահմանվել են պետական նպաստների հետևյալ տեսակները.

1) ընտանեկան նպաստ

2) սոցիալական նպաստ

3) հրատապ օգնություն

4) երեխայի ծննդյան միանվագ նպաստ

5) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ

6) ժամանակավոր անաշխատունակության նպաստ

6.1) մայրության նպաստ

7) ծերության նպաստ

8) հաշմանդամության նպաստ

9) կերակրողին կորցնելու դեպքում նպաստ

10) թաղման նպաստ[1]:

Ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից:

Ընտանեկան նպաստ ստանալու իրավունքը ծագում է դիմողի դիմելու օրվա դրությամբ, և ընտանեկան նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից:

Ընտանեկան նպաստի չափը որոշվում է՝ ընտանեկան նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի կազմում գտնվող և ընտանիքի բնակության վայրում փաստացի բնակվող 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը:

Ընտանիքի 18 տարին չլրացած անդամի համար տրվող հավելման չափը տարբերակվում է՝ ելնելով տվյալ ընտանիքի անապահովության աստիճանից, բնակավայրից, ընտանիքի 18 տարին չլրացած անդամների թվից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Ընտանեկան նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

[1] Պետական նպաստների մասին ՀՀ օրենք, 2013, հասանելի է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=94822, [06.05.2019]

1) ընտանիքի անապահովության միավորն ընտանեկան նպաստի իրավունք տվող՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորից իջնելու դեպքում
2) դիմողի կողմից սահմանված ժամկետում տարածքային կենտրոն անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում
3) ընտանեկան նպաստն անընդմեջ 3 ամիս անհարգելի պատճառով չստանալու դեպքում
4) ընտանիքի կամ ընտանիքի անդամներից որևէ մեկի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կրկնակի հաշվառման դեպքում:

Սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ չունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից:

Սոցիալական նպաստ ստանալու իրավունքը ծագում է դիմողի դիմելու օրվա դրությամբ, և սոցիալական նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից:

Սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) ընտանիքի անապահովության միավորը սոցիալական նպաստի իրավունք տվող՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորից իջնելու դեպքում
2) դիմողի կողմից սահմանված ժամկետում տարածքային կենտրոն անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում
3) սոցիալական նպաստն անընդմեջ 3 ամիս անհարգելի պատճառով չստանալու

դեպքում. ընտանիքի կամ ընտանիքի անդամներից որևէ մեկի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կրկնակի հաշվառման դեպքում:

Սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից:

Հայաստանի Հանրապետությունում հրատապ օգնության տեսակներն են միանվագ հրատապ օգնությունը և եռամսյակային հրատապ օգնությունը:

Միանվագ հրատապ օգնությունը տրամադրվում է ընտանիքում երեխայի ծննդյան դեպքում, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում և ընտանիքի անդամի մահվան դեպքում:

Եռամսյակային հրատապ օգնությունը տրամադրվում է անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում:

Եռամսյակային հրատապ օգնության իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք չունեցող անապահովության «0» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքն անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում (արտակարգ իրավիճակների և կարճատև ֆինանսական խնդիրներ ունենալու) հայտնվելու դեպքում:

Եռամսյակային հրատապ օգնություն ստանալու իրավունքը որոշում է տարածքային կենտրոնը՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) առաջարկությամբ:

Եռամսյակային հրատապ օգնությունը նշանակվում է սոցիալական նպաստի չափով՝ երեք ամիս ժամկետով (եռամսյակով):

Խորհուրդը եռամսյակային հրատապ օգնության տրամադրման մասին առաջարկությունը տալիս է՝ հաշվի առնելով՝

1) միայն կենսաթոշակառուներից, ծերության կամ հաշմանդամության նպաստառուներից բաղկացած ընտանիք լինելը.

2) ընտանիքում մեկից ավելի երեխայի առկայությունը.

3) ընտանիքի անդամներից մեկի կամ մի քանիսի երկարատև հիվանդությունը.

4) ընտանիքի կազմում գործազուրկ ունենալու հանգամանքը.

5) ընտանիքի կազմում ուսանող ունենալու հանգամանքը.

6) բնակարանի հրդեհը, բնակարանի (մի մասի) փլուզումը, ներտնային հաղորդակցուղիների վթարները և նմանատիպ այլ հանգամանքներ.

7) ընտանիքի անդամի մահը, ինչպես նաև կյանքի դժվարին այլ իրավիճակների պատճառներով առաջացած կարճատև ֆինանսական խնդիրների առկայությունը:

Եռամսյակային հրատապ օգնության վճարումը դադարեցվում է տվյալ եռամսյակի ընթացքում հետևյալ դեպքերում.

1) սույն օրենքի սահմանված ժամկետն այդ եռամսյակի ընթացքում լրանալու և անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) չներկայացվելու դեպքում.

2) ընտանիքի կամ ընտանիքի անդամներից որևէ մեկի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կրկնակի հաշվառման դեպքում.

3) ընտանիքի անապահովության միավորն այդ եռամսյակի ընթացքում «0» դառնալու դեպքում.

4) ընտանիքի ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում[2]:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետական նպաստ ստացող ընտանիքի

[2] Պետական նպաստների մասին ՀՀ օրենք, 2013, հասանելի է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=94822 [06.05.2019]

(քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում կամ այլ մարմիններից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տվյալներում նպաստի իրավունք տվող ոչ հավաստի տեղեկությունների հայտնաբերման դեպքում նպաստի վճարումը դադարեցվում է հայտնաբերման ամսից:

Բացի այդ, ավել վճարված գումարները ամբողջությամբ ենթակա են վերադարձման կամ դատական կարգով բռնագանձման, սակայն ավել գումարների վճարման հանգամանքի հայտնաբերման ամսվան նախորդած 12 ամիսների ընթացքում ստացած ավել գումարի չափից ոչ ավելի: Ավել վճարված նպաստի գումարները, նպաստ նշանակող տարածքային կենտրոնի հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա կարող են վերադարձվել նաև՝

1) նպաստ նշանակող տարածքային կենտրոնի այն աշխատակցի կողմից, որի մեղքով (գործողությունների կամ անգործության արդյունքում) վճարվել են նպաստի գումարները.

2) այն անձի կողմից, որին նշանակվել (վճարվել) է նպաստը, նրա օրինական ներկայացուցչի կողմից, նրանց փոխարեն նպաստն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձի կողմից կամ այլ անձի կողմից:

2019թ. հունվարի 24-ին ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվել է ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, 2019թ. նպաստի և սոցիալական նպաստի համար ընտանիքի ապահովության սահմանային միավորը սահմանելու և 2019թ. ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության վճարման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափերն՝ ըստ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների հաստատելու կարգը:

Որոշմամբ սահմանվել է, որ 2019 թվականի պետական բյուջեով «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին վճարվում են՝

ա. ընտանեկան նպաստը,

բ. սոցիալական նպաստը,

գ. հրատապ օգնությունը՝ ընտանիքում երեխայի ծննդյան, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու, ընտանիքի անդամի մահվան դեպքերում տրվող միանվագ հրատապ օգնություն և եռամսյակային հրատապ օգնություն.

3) սահմանամերձ բնակավայրեր են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի N 163 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված բնակավայրերը:

Որոշմամբ 2019 թվականին ընտանեկան նպաստի և սոցիալական նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորի մեծությունը սահմանվել է 30.00 միավոր:

Ընտանեկան նպաստի բազային մասի չափը, 18 տարին չլրացած անդամին տրվող հավելման տարբերակման պայմաններն ու տարբերակված չափերը՝

1) ընտանեկան նպաստի բազային մասը՝ 18000 դրամ.

2) 30.01-35.00 անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 5500 դրամ,

բ. չորս և ավելի՝ 18 տարին չլրացած անդամ ունեցող ընտանիքների (այսուհետ՝ բազմազավակ ընտանիք) յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

գ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ,

դ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000

դրամ.

3) 35.01-39.00 անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ,

բ. բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ,

գ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

դ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7500 դրամ.

4) 39.01 և ավելի անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

բ. բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7500 դրամ,

գ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ,

դ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 8000 դրամ:

5. Սահմանել սոցիալական նպաստի չափը՝ 18000 դրամ:

6. Սահմանել հրատապ օգնությունների չափերը՝

1) միանվագ հրատապ օգնության չափերը՝

ա. երեխայի ծննդյան դեպքում՝ 50000 դրամ,

բ. երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու դեպքում՝ 25000 դրամ,

գ. ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 50000 դրամ.

2) եռամսյակային հրատապ օգնության ամսական չափը՝ 18000 դրամ[3]:

[3] Հայաստանի Հանրապետության Կառավարություն. Որոշում 24 հունվարի 2019 թվականի N 50-ն, հասանելի է՝ http://www.irtek.am/views/act.aspx?aid=151062 [06.05.2019]

ՀՀ Աշխատանքային օրենսգրքով կարգավորվող որոշ հարցերի մասին[4]

ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվում են, թե ովքեր են հանդիսանում աշխատողները, աշխատանքային պայմանագրերի կնքման պայմանները, գործատու և աշխատող իրավահարաբերությունների բնույթը:

Նշված օրենսգրքի համաձայն՝ աշխատողը սույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

Աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք, որոնք կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մինչև 16 տարեկան անձանց հետ կնքվում է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր:

Բացի այդ, տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձինք չեն կարող ընդգրկվել աշխատանքի՝ հանգստյան, ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին, բացառությամբ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու դեպքերի:

Աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ,

[4] Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգիրք, հասանելի է՝ http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2131#1.2 [06.05.2019]

որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

Աշխատանքային պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված չէ և որոշակի ժամկետով, եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված է:

Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարման պայմանները, եթե սույն օրենսգրքով կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել որոշակի ժամանակահատվածով կամ օրացուցային ժամկետի սահմանումով կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտման սահմանումով:

Ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը մինչև երկու ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրն է:

Անօրինական է համարվում այն աշխատանքը, որն իրականացվում է առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի:

Կամավոր աշխատանքը և օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքը չեն կարող համարվել անօրինական: Այդպիսի աշխատանքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

Անօրինական աշխատանք կատարելու թույլտվություն տված և (կամ) աշխատանքի հարկադրող գործատուները կամ նրանց ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև հատուցում են նման աշխատանք կատարողներին այդ աշխատանքի կատարման ընթացքում ոչ աշխատողի մեղքով պատճառված վնասները: Եթե դատական կարգով հաստատված է, որ աշխատողի և գործատուի միջև գոյություն ունեն (գոյություն են ունեցել) փաստացի աշխատանքային հարաբերություններ, ապա աշխատանքային հարաբերությունները համարվում են ծագած այն օրվանից, երբ աշխատողը փաստացի անցել է աշխատանքի: Աշխատողն աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու նպատակով իրավունք ունի դիմելու դատարան փաստացի աշխատանքային հարաբերությունների գոյության ժամանակահատվածում, ինչպես նաև փաստացի աշխատանքային հարաբերությունները դադարելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Դատարանի օրինական վճռով գործատուի և աշխատողի միջև փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստի հաստատումը չի ազատում գործատուին օրենքով սահմանված պատասխանատվությունից:

Իրավիճակի նկարագրություն

Ընտանեկան նպաստի միասնական պետական համակարգը Հայաստանում գործում է 1999 թվականից: Քսան տարիների ընթացքում այն մշտական փոփոխություններ է կրել, որը շարունակվում է առ այսօր: Դրանք վերաբերել են ինչպես ծրագրի կառավարմանը, շահառուների ընտրությանը, այնպես էլ տրամադրվող նպաստների չափին: Այս փոփոխությունների և, առհասարակ, պետական նպաստների համակարգում առկա խնդիրների վերաբերյալ իրականացվել են բազմաթիվ հետազոտություններ: Դրանց առանցքում հիմնականում եղել են համակարգի գործառնության արդյունավետության գնահատումը, նպաստառու ընտանիքների կարիքի գնահատման հարցերը և այլն: Այս զեկույցի շրջանակներում հիմնականում անդրադարձ է կատարվել 2016-2018 թվականների ընթացքում իրականացված մի քանի նշանակալի հետազոտությունների, որոնք թույլ կտան առավել առարկայական պատկերացում կազմել ոլորտի խնդիրների վերաբերյալ՝ վերջին մի քանի տարվա կտրվածքով:

Սոցիալական աջակցության ոլորտը կարգավորվում է «Պետական նպաստների մասին» օրենքով, որը ուժի մեջ է մտել 2014 թվականից: Այս օրենքի շրջանակում ստեղծվել է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագիրը: Այս ծրագիրը սոցիալական պաշտպանության, մասնավորապես, անապահով սոցիալական խմբերի աջակցության բնագավառում շարունակաբար իրականացվող պետական բյուջետային ծրագիր է: Ինչպես վերը նշվեց (տես. էջ 7) ծրագրի նպատակն է անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը, ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը: Ծրագրով

սահմանվում են նպաստների երեք տեսակները՝ *ընտանեկան, սոցիալական* և *հրատապ օգնության*: «Պաշտպանված նպաստառու ընտանիք և իրազեկ քաղաքացի» ծրագրի շրջանակներում շեշտն առավելապես դրվել է ընտանեկան և սոցիալական նպաստների համակարգի խնդիրների, մասնավորապես, նպաստառու քաղաքացիների աշխատանքի անցնելու հանգամանքով պայմանավորված՝ ծագած խնդիրների վրա:

Պետական նպաստների և սոցիալական աջակցության ծրագրերի ուսումնասիրություններից նախ հարկ է առանձնացնել «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» բյուջետային ծրագրի գնահատումը: Ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել աղքատության մակարդակին ՀՀ մարզերում, ծրագրի իրականացման ազդեցությանը աղքատության ցուցանիշի վրա, արդյունավետությանը, աղքատության հաղթահարման մեխանիզմներին և այլն: Ըստ ստացված տվյալների՝ ՀՀ տնային տնտեսությունների (SS) 33%-ը և նպաստառու ընտանիքների 56%-ն աղքատության շեմում են: Իսկ ծայրահեղ աղքատ են բոլոր SS-ների 2.2%-ը և նպաստառուների 4.7%-ը[5]: Ուսումնասիրությունն անդրադարձել է նաև նպաստի տրամադրման համակարգին, անապահովության միավորների հաշվարկմանը, ծրագրում ընդգրկված լինելու պայմաններին, ինչպես նաև այն խնդիրներին, որոնք առաջ են գալիս այդ գործընթացում: Հետազոտության մի մասն էլ նվիրված է շահառուների կողմից ծրագրի ընկալման և գոհունակության ուսումնասիրությանը, և առհասարակ վերլուծվել են նպաստառու համարվելու համար անհրաժեշտ չափանիշները: Այստեղ հարկ է առանձնացնել հետազոտության՝ տեղեկացվածության վերաբերյալ բաժինը, ըստ որի, չնայած հարցվողների մեծ

[5] Թումանյան Մ., Հարությունյան Կ., Հակոբյան Լ., 2016, Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ բյուջետային ծրագրի գնահատում, Երևան, էջ 14

մասը հիմնականում տեղյակ է ընտանեկան նպաստների համակարգին, սակայն տեղեկացվածության մակարդակը ցածր է հատկապես ծայրահեղ աղքատ ընտանիքների շրջանում և Երևանում: Մյուս կողմից, տեղեկացվածության ցածր մակարդակը նաև պատճառ է դառնում, որ շատ ընտանիքներ չհաշվառվեն այս համակարգում:

2016թ. իրականացվել է նաև Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի բարելավման հետազոտությունը, որի արդյունքները վերաբերում էին ընտանիքների անապահովության գնահատման բանաձևին, խոցելի խմբերի անապահովության միավորների և ընտանեկան նպաստների հասցեականությունն ապահովող գործընթացների ուսումնասիրությանը[6]: Ստացված տվյալները և դրանց վրա կատարված առաջարկները վկայում էին այն մասին, որ համակարգը էական բարեփոխումների կարիք ունի:

«Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի մեկ այլ մշտադիտարկում և գնահատում իրականացվել է նաև 2017 թվականին՝ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից[7]: Ի տարբերություն նախորդ նշված հետազոտության, որն անդրադառնում է բուն ծրագրին, մոտեցումներին և չափանիշներին, այս դեպքում շեշտը հիմնականում դրվել է ծրագրի, շահառուների նկարագրության, ֆինանսավորման ու վարչարարության խնդիրների վրա: Այս հետազոտության շրջանակներում հատկապես արժանահիշատակ է նպաստառուների եկամտի աղբյուրների հատվածը: Նպաստառուների եկամուտները հիմնականում ձևավորվում են զբաղվածությունից ստացված եկամտից, նպաստներից և կենսաթոշակից, ինչպես

[6] Միրզախանյան Ա., 2018, Բնակչության սոցիալական խոցելիության գնահատման հիմնական մոտեցումները, չափորոշիչները և ցուցանիշների համակարգը, Երևան, էջ 9

[7] «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ, 2017, «Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի մշտադիտարկման և գնահատման ամփոփ հաշվետվություն, Երևան

նաև գյուղատնտեսական նշանակության հողերի մշակումից և անասնապահությունից ստացվող եկամուտներից[8]: Հատկանշական է, որ նպաստառու ընտանիքներից՝ զբաղվածությունից եկամուտ են ստանում ընդամենը 11.3%-ը: Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ տրամադրվող նպաստների ազդեցությունը ընտանիքի եկամտի վրա ունեցել է որոշակի դրական, սակայն ոչ էական ազդեցություն, հնարավորություն տալով ընտանիքներին հաղթահարելու ծայրահեղ աղքատության շեմը: Սակայն մեծ հաշվով ընտանիքները շարունակել են մնալ անապահով[9]: Ըստ մեկ այլ ուսումնասիրության կենսաթոշակներն աղքատության մեղմացման տեսանկյունից շատ ավելի նշանակալի ազդեցություն ունեն, քան ընտանեկան նպաստները: Մասնավորապես, կենսաթոշակի վճարման պարագայում, աղքատությունը նվազում է մոտ 12,1%-ով, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 13,3%: Ընտանեկան նպաստների համակարգը որոշ չափով ազդում է ծայրահեղ աղքատության վերացման վրա[10]: Համեմատությունը թույլ է տալիս հասկանալ, որ եթե օգնությունը տրվում է որոշակի խմբի առանձին անդամներին համատարած, ապա այն ավելի արդյունավետ է լինում, քան, օրինակ, ընտանիքին՝ որպես մեկ միավորի:

Մշտադիտարկման և գնահատման ծրագրում անդրադարձ է կատարվում նաև ծրագրերի և մատուցվող ծառայությունների վերաբերյալ շահառուների իրազեկվածությանը: Ըստ հետազոտության տվյալների՝ ցածր է քաղաքացիների իրազեկվածությունը ծրագրի շրջանակներում հասանելի ծառայությունների և արտոնությունների, դրանցից օգտվելու ընթացակարգերի վերաբերյալ: Եթե վերոնշյալ հետազոտության շրջանակներում ընտանեկան նպաստների համակարգի

[8] Նույն տեղում, էջ 43
[9] Նույն տեղում, էջ 46
[10] Կարապետյան Տ., 2016, Սոցիալական տրանսֆերտների ձևավորման և վճարման սկզբունքները բազմաչափ աղքատության վրա ազդեցության համատեքստում (ընտանեկան նպաստի և աշխատանքային կենսաթոշակի օրինակներով), մագիստրոսական թեզ, Երևան, էջ 70

վերաբերյալ տեղեկացվածության ցուցանիշը բարձր է, ապա այս դեպքում, երբ տեղեկացվածությունը կամ տեղեկացված լինելն առավել բացված է ներկայացվել, ակնհայտ է դառնում, որ ըստ առանձին փոփոխականների, ցուցանիշներն արդեն բավականին ցածր են: Հետազոտությունն անհամեմատ ավելի ամբողջական կլիներ, եթե նաև նշվեր, թե կոնկրետ որ խմբերն են առավել քիչ տեղեկացվածները (ըստ բնակավայրի տեսակի, ընտանիքի կենսամակարդակի և այլն): Հատկանշական է, որ հետազոտության հեղինակները անիրազեկվածության խնդիրը տվյալ համատեքստում ներկայացնում են որպես տեղեկատվական աղքատություն: Պարզաբանելով նշում են՝ աղքատության մեջ հայտնվելու պատճառով մարդիկ կորցնում են նաև տեղեկատվություն ձեռքբերելու հմտությունները: Սրա հետևանքով հաճախ աղքատ ընտանիքները՝ նրանց անդամները չեն կարողանում օգտվել իրենց համար սահմանված աջակցության հնարավորությունից՝ իրազեկվածության ու անհրաժեշտ խորհրդատվության անբավարարության կամ անմատչելիության պատճառով[11]: Նշված հետազոտությունն անդրադառնում է աղքատության հիմնախնդրին և սոցիալական աջակցության քաղաքականությանը Հայաստանում: Այստեղ տնտեսական պատճառներից զատ, շեշտադրվում է նաև աղքատության քաղաքական բնույթը[12]: Բացի այդ, հեղինակն աղքատությունը դիտարկում է կապիտալների համատեքստում և պնդում, որ աղքատությունը ձևավորվում է ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական և մշակութային կապիտալների անբավարարության հետևանքով: Նա մասնավորապես նշում է, որ մի շարք գործոններ, ինչպիսիք են կրթությունը, առողջապահական ծառայությունների հասանելիությունը, գոյություն ունեցող դիսկուրսները վերարտադրում են

[11] Թադևոսյան Ա., 2018, Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում (Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրի դիտարկման հիման վրա), Երևան, էջ 31
[12] Նույն տեղում, էջ 4

աղքատությունը ինչպես հասարակական, այնպես էլ ընտանեկան մակարդակում: Հեղինակն աղքատությունն ու դրա վերարտադրությունը դիտարկում է ընտանեկան նպաստների և 2014-2025 թթ. ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրերի համատեքստում: Ըստ նրա՝ այն ընտանիքի գոյատևման խնդրի լուծմանն ուղղված ծրագրից պետք է վերածվի ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրի, որը ենթադրում է ոչ միայն ֆինանսական և նյութական բնույթի օգնություն, այլ նաև առողջապահական, կրթական, հոգեբանական, սոցիալ-մշակութային և վերականգնողական ծառայություններ[13]:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից 2017 թվականին իրականացված «Նպաստառուների (նպաստառու ընտանիքների) կյանքի որակի ուսումնասիրություն» խորագրով հետազոտությունը հետաքրքիր տվյալներ է ներկայացնում նպաստառուների՝ աշխատաշուկայում ներգրավվելու վերաբերյալ: Մասնավորապես, ուսումնասիրության շրջանակներում երկու խումբ է առանձնացվել՝ 28-29 և 30-32 միավորներ ունեցողներ: 28-29 միավոր ունեցող ընտանիքներում, ովքեր նպաստ չեն ստանում, վարձատրվող աշխատանք ունեցողներն ավելի շատ են՝ 19%, քան նպաստ ստացող ընտանիքներում՝ 17%: Իսկ չեն աշխատում այդ խմբերի՝ համապատասխանաբար առաջին խմբում 63 տոկոս, իսկ երկրորդ խմբում 56 տոկոս հարցվողները: Նպաստ ստացողների 66 տոկոսը, իսկ չստացողների 36%-ն աշխատում են առանց գրանցվելու, ժամանակավոր կամ մշտական աշխատանքային պայմանագրով աշխատում են նպաստ ստացողների 25 տոկոսը՝ չստացողների 42%-ը[14]: Այսպիսով, տեսնում ենք, որ նպաստ ստացողներից

[13] Նույն տեղում, էջ 31-32

[14] «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ, 2017, «Նպաստառուների (նպաստառու ընտանիքների) կյանքի որակի ուսումնասիրություն», ծրագրի աշխատանքների կատարման հաշվետվության հավելված, Երևան, էջ 58-59

աշխատանք ունեցողներն ավել քիչ են, իսկ աշխատանք ունենալու դեպքում էլ, մեծամասամբ չգրանցված աշխատողների կարգավիճակում են:

Ամփոփելով հարկ է նշել, որ սոցիալական աջակցության և նպաստների համակարգի վերաբերյալ հետազոտությունները հիմնականում անդրադառնում են պետական նպաստների քաղաքականությանը, այդ առումով ծրագրերի իրագործմանն ու խնդիրներին, նպաստառուների սոցիալ-տնտեսական վիճակի նկարագրությանը, աղքատության հիմնախնդիրներին, նպաստառուների կյանքի որակի ընկալումներին և ներկայացվում են ոլորտի բարելավմանն ուղղված մի շարք կարևոր առաջարկներ:

Վերոնշյալ հետազոտությունները, անշուշտ կարևոր են ոլորտի խնդիրներին տիրապետելու տեսանկյունից, սակայն դրանով հանդերձ նպաստառու ընտանիքների անդամների աշխատանքի անցնելու հանգամանքով պայմանավորված, որոշ հարցեր մնում են բավականաչափ խորն ու համապարփակ չուսումնասիրված, մասնավորապես՝ ի՞նչ իրական հնարավորություններ ունեն նպաստառուներն աշխատաշուկա մուտք գործելու տեսանկյունից, ի՞նչ խնդիրներ կան նպաստառու-գործատու փոխհարաբերություններում, որքանո՞վ են պաշտպանվում նպաստառու ընտանիքների շահերն աշխատանքի անցնելու համատեքստում և այլն: Այս խնդիրները, ինչպես նաև որոշ արժանահիշատակ այլ հարցեր, ընկած են «Նպաստառու ընտանիքների շահերի պաշտպանության և նպաստառուների տեղեկացվածության խնդիրները» խորագրով հետազոտության առանցքում:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Սույն հետազոտության նպատակը նպաստառու ընտանիքների անդամների՝ աշխատանքի անցնելու հնարավորությունների և խնդիրների ուսումնասիրությունն է, որն իրականացվում է «Պաշտպանված նպաստառու ընտանիք և իրազեկ քաղաքացի» ծրագրի շրջանակում: Հետազոտության միջոցով վեր են հանվել այն խնդիրները, որոնք առնչվում են նպաստառու ընտանիքների անդամների՝ աշխատանքի անցնելու պատճառով առաջացած շահերի պաշտպանության հարցերին: Հետազոտությունն իրականացվել է սոցիալական ոլորտի ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների, նպաստառու ընտանիքների անդամների և գործատուների հետ:

Հետազոտության նպատակային թիրախում են հետևյալ հարցադրումները.

- Ի՞նչ դեր ունեն սոցիալական աջակցության տարածքային բաժինների ներկայացուցիչները նպաստառուների իրազեկման հարցում, մասնավորապես նրանց աշխատաշուկա մուտք գործելու համատեքստում:
- Ինչպիսի՞ դիրքորոշում ունեն նպաստառու ընտանիքների անդամներն աշխատանքի անցնելու և դրանով պայմանավորված հետևանքների վերաբերյալ:
- Ինչպիսի՞ն է գործատուների վերաբերմունքը նպաստների համակարգի հանդեպ՝ նպաստառու աշխատակիցներ ունենալու համատեքստում:
- Ի՞նչ փոփոխություններ են անհրաժեշտ՝ նպաստառու ընտանիք-աշխատանք կապն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Հետազոտությունը, մասնավորապես, անդրադառնում է նաև հետևյալ հարցերին.

- նպաստառուների/նպաստառու ընտանիքների տեղեկացվածությունը նպաստների համակարգի վերաբերյալ (նպաստառու քաղաքացիների իրավունքներին, պարտականություններին, արտոնություններին և համակարգում իրականացվող փոփոխություններին),
- սոցիալական աջակցության տարածքային բաժինների ներկայացուցիչների դերը նպաստառուների իրազեկման գործում,
- նպաստառու ընտանիքների անդամների աշխատանքի փորձառությունը,
- գործատուների՝ նպաստառու աշխատակից ունենալու փորձառությունը,
- նպաստների համակարգի հանդեպ վերաբերմունքը,
- նպաստների համակարգի հնարավոր փոփոխությունները:

Հետազոտության մեթոդները

Հետազոտության իրականացման համար ընտրվել է որակական մեթոդաբանությունը, ինչը հնարավորություն է տվել խորքային և բազմակողմանի ուսումնասիրել վերոբերյալ հարցադրումները և առարկայական պատկերացում կազմել ոլորտում առկա խնդիրների, ինչպես նաև հնարավորությունների մասին: Մասնավորապես, կիրառվել են խորին հարցազրույցների և ֆոկուս խմբային քննարկումների մեթոդները: Խորին հարցազրույցներն իրականացվել են երկու տարբեր թիրախային խմբերի՝ սոցիալական ոլորտի ներկայացուցիչների, ոլորտի փորձագետների (1) և գործատուների (2) հետ: Ֆոկուս խմբային քննարկումներն անցկացվել են նպաստառու ընտանիքների անդամների մասնակցությամբ:

Քննարկումների նպատակն էր ուսումնասիրել նաև նպաստառուների տեսակետները համակարգի վերաբերյալ՝ ապահովելով բազմակողմանի մոտեցում:

Հետազոտության ընտրանքը

Հետազոտությունն անցկացվել է Երևանում և Գյումրիում: Երևանն ընտրվել է որպես մայրաքաղաք, իսկ Գյումրին՝ որպես ամենաշատ նպաստառու ընտանիքներ ունեցող բնակավայրերից մեկը:

Իրականացվել է 24 խորին հարցազրույց, որից 16-ը՝ սոցիալական ոլորտի ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների, իսկ 8-ը՝ գործատուների հետ: Ընդ որում, սոցիալական ոլորտը դիտարկվել է ավելի լայն համատեքստում և հարցազրույցներ են իրականացվել ինչպես պետական և համայնքային կառույցների (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սոցիալական աջակցության տարածքային բաժիններ), այնպես էլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, սոցիալական աշխատողների հետ, ովքեր իրենց գործունեության բերումով քաջատեղյակ են նպաստառու ընտանիքների խնդիրներին կամ մասնակցում/մասնակցել են ոլորտի քաղաքականության մշակման գործընթացներին:

Գործատուները նույնպես ընտրվել են բիզնեսի տարբեր բնագավառներից՝ սպասարկում, արտադրություն, ծառայությունների մատուցում, ինչը թույլ է տվել խնդրի մասին բազմակողմանի տեղեկատվություն ստանալ: Երկու խմբերի ընտրանքի դեպքում էլ կիրառվել է ձնակույտի մեթոդը:

Իրականացվել է նաև 6 ֆոկուս խմբային քննարկում: Դրանց մասնակիցների թվաքանակը, հաշվի առնելով թեմայի նրբությունը, տատանվել է 3-ից 6-ի միջև: Երևանում անցկացված 2 քննարկումների մասնակիցները կազմել են խառը խմբերը՝

տարբեր տիպի նպաստներ ստացող անձինք: Գյումրիում անցկացված 4 քննարկումներից երեքին մասնակցել են ուսանողներ, որոնցից 2-ը ներկայում նպաստ ստացողների խմբերի ներկայացուցիչներ են, իսկ մեկը՝ նպաստից վերջին մեկ տարվա ընթացքում կտրված անձինք: Գյումրիում մյուս քննարկումն անցակցվել է անչափահաս երեխաների ծնողների հետ, ովքեր ևս օգտվում են նպաստների համակարգից: Ըստ էության՝ խառը խմբեր կազմելն ամենաարդյունավետ տարբերակն էր սահմանափակ ռեսուրսների պայմաններում տարբեր տիպի նպաստ ստացող անձանցից ինֆորմացիա ստանալու համար: Յուրաքանչյուր խմբի պարագայում՝ կախված նրա յուրահատկությունից, հատուկ շեշտադրվել են որոշակի հարցեր, որոնք թույլ են տվել հասկանալ համակարգի խնդիրները տարբեր կողմերից, և ամբողջապես:

Հետազոտության ընտրանքում փորձ է արվել ներառել նրանց, ովքեր այս կամ այն կերպ առնչվում են/առնչվել են նպաստների համակարգին և կարող էին տալ բազմակողմանի և խորքային տեղեկություններ դրա մասին:

	Երևան	Գյումրի
Խորին հարցազրույցներ սոցիալական ոլորտի ներկայացուցիչների, ոլորտի փորձագետների հետ	9	7
Խորին հարցազրույցներ գործատուների հետ	5	3
Ֆոկուս խմբային քննարկումներ նպաստառուների մասնակցությամբ	2	4

Հարկ է նաև նշել, որ հետազոտության արդյունքները չեն կարող տարածվել ամբողջ հանրապետության վրա, քանի որ վերաբերում են Երևանին և Գյումրիին: Իսկ այս քաղաքներում խնդիրների իրական պատկերը կարող է տարբերվել ՀՀ մյուս մարզերում առկա իրավիճակից:

Սոցիալական ոլորտի ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների հետ իրականացված խորին հարցազրույցների արդյունքների վերլուծություն

Սոցիալական ոլորտի ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների հետ հարցազրույցների ընթացքում քննարկվել են նպաստառու ընտանիքների իրազեկվածության, աշխատանքի անցնելու հանգամանքով պայմանավորված, տարբեր իրավիճակներում քաղաքացիների նպաստից զրկվելու և համակարգում վերականգնվելու հնարավորության, աշխատանքի խրախուսման համատեքստում նպաստների համակարգի հնարավոր փոփոխությունների հարցերը: Ընդհանուր առմամբ, հետազոտությունը երկու հիմնական թիրախային ուղղությունների վրա է կառուցվել՝ իրազեկվածություն և աշխատանքի հնարավորություն, որոնց համատեքստում էլ վերհանվել են խնդիրները և դրանց լուծման մեխանիզմները:

Նպաստների համակարգի վերաբերյալ տեղեկացվածությունը

Առհասարակ, որքան մարդիկ տեղեկացված են լինում իրենց իրավունքներին և պարտականություններին, այնքան ավելի արդյունավետ են կարողանում պաշտպանել իրենց շահերը: Իրավիճակի ուսումնասիրության հատվածում ներկայացված հետազոտության տվյալների համաձայն՝ նպաստառուները հիմնականում տեղեկացված են նպաստների համակարգից, սակայն երբ խոսում ենք դրա առանձին բաղադրիչների՝ արտոնությունների, հասանելի ծառայությունների մասին, ապա ակնհայտ է դառնում, որ տեղեկացվածության մակարդակը նվազում է: Հետազոտության բացն այն է, որ չի նշվում, թե հատկապես որ խմբերի մոտ է գրանցվել ցածր իրազեկվածության մակարդակը (օրինակ, ըստ

բնակության վայրի, տարիքի և այլն), ինչը պատկերն ավելի ամբողջական կդարձներ: Անդրադառնալով նպաստառուների տեղեկացվածության վերաբերյալ սոցիալական ոլորտի ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների արտահայտած կարծիքներին՝ հարկ է նշել՝ նրանք հիմնականում գտնում են, որ նպաստառու ընտանիքների անդամները պետք է որ մեծամասամբ տեղյակ լինեն և՛ նպաստների համակարգին, և՛ իրենց իրավունքներին ու պարտականություններին, և՛ արտոնություններին ու տրամադրվող անվճար ծառայություններին: Այս բյուրեղացած կարծիքը սոցիալական ոլորտի ներկայացուցիչները (ՍԱՏԲ) հետևյալ փաստարկներով են հիմնավորում: Նախ, երբ մարդիկ ցանկանում են հաշվառվել նպաստների համակարգում և ընտանիքի անապահովության սահմանային միավորը բավարարում է նպաստ ստանալու համար, սոցիալական ծառայությունների ներկայացուցիչները հանգամանորեն ներկայացնում են նպաստների համակարգի առանձնահատկությունների, մասնավորապես նպաստառուների իրավունքների, պարտականությունների, արտոնությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններ: Բացի այդ, նպաստառուները նաև փաստաթուղթ են ստորագրում, որում կրկին այդ ամենը նշված է լինում: Այլ հարց է՝ արդյոք նրանք կարդում կամ կարդալուց հետո ամբողջապես տիրապետում են այդ տեղեկատվությանը: Հաջորդ փաստարկն այն է, որ անհամեմատ քիչ են մարդիկ, ովքեր նոր են հայտնվում համակարգում: Նրանց մեծամասնությունը տարիներ շարունակ համակարգի շահառու է, և այդ ընթացքում հասցրել է ծանոթանալ համակարգի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը: Տեղեկացվածության հարցում շատ մեծ է սոցիալական կապերի դերը, երբ բարեկամը բարեկամին, հարևանը հարևանին և այդպես շարունակ, փոխանցում են տեղեկատվությունը, պատմում արտոնությունների, առավելությունների, հնարավոր խնդիրների մասին: Այսպիսով, շատերը, դիմելով նպաստների համակարգում հաշվառվելու համար, արդեն ունենում են բավականաչափ տեղեկատվություն և

գիտեն, թե, մասնավորապես որքան է լինելու իրենց ստանալիք նպաստի չափը, ինչ արտոնություններից են կարողանալու օգտվել և այլն: Հատկանշական է, որ նպաստառուներից շատերն իրենց իրավունքներն առաջ մղելով, նույն ջանասիրությամբ չեն կատարում սեփական պարտականությունները: Դա նախևառաջ արտահայտվում է որոշ դեպքերում կեղծ տեղեկություններ տրամադրելու, իրական եկամուտները թաքցնելու հարցերում: Սրան զուգահեռ լինում են դեպքեր, երբ քաղաքացիները համակարգում հաշվառվելուց հետո են միայն տեղեկանում, որ կարող են մի շարք արտոնություններից օգտվել:

«Մինչև մեր ասելն էլ քաղաքացին արդեն գիտի՝ ինչ կանոնակարգով, ինչ փաստաթղթեր պետք ա ներկայացնել: Սոցիալական շրջապատի ազդեցությունն ա, շենքի հարևանները պատմում են, տեղյակ են… ես սենց արեցի, կարող ես դու էլ անել»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

«Հիմա արդեն լիովին տեղեկացված են: Նույնիսկ գիտեն՝ որ սոցիալական խմբին ինչքան միավոր է հասնում»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

«ՍԱՏԲ-ներում իրազեկումը իրականացվում ա: Ամեն մեկը մի տարածք սպասարկում ա: Մենք էլ ենք անում, պաստառների տեսքով, հայտարարություններով, կայքէջերում: Եթե ուզենան բան իմանան, շատ տեղեր կա ինֆորմացիան: Նպաստառուներն աշխատողներից լավ էլ տեղյակ են ամեն ինչից»:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակից

«Դասընթացներից մեկի ժամանակ շահառուն ինքը կարողանում էր հաշվել իր ընտանիքի անապահովության միավորը՝ ինչպես է գոյանում այդ միավորը, ինչպես է հաշվարկվում, որ դեպքում է… ինչը բավականին բարդ հաշվարկ է»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Գյումրի

Եթե տարիներ առաջ քաղաքացիները հնարավոր է՝ այդքան էլ տեղեկացված չլինեին այդ ամենից, ապա ներկայում իրավիճակն այլ է, քանի որ նպաստների համակարգի, դրանում իրականացվող փոփոխությունների վերաբերյալ ԶԼՄ-ներում, և սոցիալական մեդիայում տեղակատվությունը շատ է: Համացանցն, առհասարակ ավելի հասանելի է դարձել, և ցանկացած տեղեկություն կարելի է հեշտությամբ գտնել: Տեղեկացված լինելուց զատ, կարևոր է նաև այն, թե, արդյոք նրանք կարողանում են արդյոք օգտվել իրենց իրավունքներից:

«Ի սկզբանե ներկայացնում ենք… օրինակ, 2006 թվականին շատ անտեղյակ էին, հիմա չէ, շատ են խոսում, հեռուստատեսությամբ էլ: Իրենց իրավունքները բնակիչները շատ ավելի լավ գիտեն, քան առաջ»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

«Շատ ինֆորմացված են: Եթե 10 տարի առաջ չկար նման բան, բանիմաց մարդիկ շատ չէին, որ հետաքրքրվեր, դիմեր, հիմա համարյա բոլորը գիտեն իրավունքները, պարտականությունները, խաբելու ձևերը»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

Սակայն մյուս կողմից, ներկայացվել է նաև արժանահիշատակ կարծիք, որ քաղաքացիների մոտ խնդիրները հիմնականում առաջ են գալիս հենց թերի

իրազեկվածության հետևանքով: Մասնավորապես, նշվում է, որ եղել են դեպքեր, երբ մարդիկ նպաստից զրկվել են, բայց իրականում այդպես չպետք է լիներ: Կան դեպքեր, երբ ինչ-ինչ պայմանների փոփոխության դեպքում նպաստը կարող էր վերահաշվարկվել և գումարն ավելանալ, սակայն քաղաքացիները չեն իմացել այդ մասին:

«Ընդհանրապես, կարող եմ ասել բավականին ցածր է իրազեկվածության տոկոսը, համարյա ամեն 4-5-րդի հետ խնդիներ են ունեցել: Խախտումները հենց սոցիալական աջակցության կենտրոններից են սկսում… կամ բավարար չափով չեն իրազեկել: Քաղաքացին իրավունք ունի տեղեկացված չլինելու, բայց կառույցները իրավունք չունեն չտեղեկացնեն: Էդ բացը մենք ունենք»:

ՀԿ սոցիալական աշխատող, Գյումրի

Այս տիրույթում առաջ է քաշվում նաև իրազեկման գործում պատասխանատուների հարցը: Ֆորմալ առումով, նպաստառուներին առաջին հերթին իրազեկողները պետք է լինեն սոցիալական աջակցության բաժինների ներկայացուցիչները: Տեսականորեն, եթե այդ կենտրոնների ներկայացուցիչներն իրենց պարտականությունները կատարում են, ապա նպաստառուները պետք է որ տեղյակ լինեն իրենց իրավունքներին, պարտականություններին, արտոնություններին և այլն: Սակայն, հատկապես Երևանից դուրս (այս դեպքում Գյումրիի օրինակով) տեսնում ենք, որ խնդիրներ կան նպաստառուների տեղեկացվածության առումով: Նշվու է, որ երբեմն աշխատողները շեշտը դնում են վարչարարության, փաստաթղթային աշխատանքներն արագ կատարելու վրա, շատ չեն խորանում բովանդակային հարցերի մեջ, ինչն էլ կարող է նպաստառուների թերի իրազեկվածության պատճառ դառնալ:

«Ավելի շուտ ուզում են ադմինիստրատիվ գործը անեն, վերջացնեն, ու քաղաքացու հետ էլ չեն խոսում: Մտածում են քաղաքացին գիտի, քաղաքացին էլ մտածում ա, որ աշխատողը իմանար, կասեր»:

Սոցիալական աշխատող, Երևան

Հարցման մասնակիցներից ոմանք նշում են նաև, որ տեղեկացվածության մասին խոսելիս պետք է տարանջատել՝ իրավունքներին և պարտականություններին տեղեկացվածությունը: Նշվում է, որ նպաստառուներն իրենց իրավունքները, որպես կանոն, շատ լավ գիտեն, բայց երբ հերթը հասնում է պարտականություններին, ապա առաջ են գալիս խնդիրներ: Մասնավորապես, նպաստառուների պարտականությունների մեջ է մտնում սոցիալական աջակցության կենտրոնների իրենց տարածքները սպասարկող աշխատակիցներին ներկայացնել փաստաթղթեր ընտանիքում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ. աշխատանքի ընդունվելու կամ աշխատանքից դուրս գալու, բնակության վայրը փոխելու, ընտանիքում նոր անդամի ծննդյան կամ մահվան և այլն: Նշված ցանկացած փոփոխություն կարող է ազդել նպաստառուի անապահովության միավորի վրա, ըստ որի որոշվում է նպաստի չափը: Հաճախ նպաստառուները պատշաճ չեն կատարում այս պարտավորությունները, ինչի հետևանքով էլ խնդիրներ են առաջ գալիս, որոնք մասնավորապես, կարող են արտահայտվել նպաստների հետգանձումներով, ինչը, սովորաբար, լավ չի անդրադառնում ընտանիքի վրա: Թերի իրազեկվածությունից զատ, երկու այլ պատճառ նույնպես առանձնացվում է, թե ինչու է պարտականությունների կատարման առումով նման խնդիրներ առաջանում: Նախ, նպաստառուներն այդքան էլ լուրջ չեն վերաբերվում իրենցից ակնկալվող գործողություններին՝ պարտավորությունների առումով: Լուրջ չեն վերաբերվում այն առումով, որ չեն գիտակցում, թե ինչ հետևանքների առաջ կարող են կանգնել դրանց չկատարման դեպքում: Սա կարող է պայմանավորված լինել նաև այն

հանգամանքով, որ նպաստառուները մտածում են, թե ինչու պետք է հետգանձեն իրենց նպաստը, չէ որ իրենք անապահով են: Այսինքն, այստեղ այն կարծրատիպային ընկալումն է գործում, որ ընտանիքի անապահովությունն իր հետ պետք է բերի այդ երևույթի նկատմամբ համապատասխան վերաբերմունք ցանկացած իրավիճակում: Մյուս պատճառն այն է, որ քաղաքացիները շատ լավ տեղյակ լինելով իրենց պարտավորություններին, միտումնավոր չեն կատարում դրանք (հարկ եղած դեպքում կարող են ասել, որ տեղյակ չեն այդ մասին): Օրինակ, եթե նպաստառու ընտանիքի անդամներից մեկը գրանցված աշխատանքի անցնի և փաստաթուղթ ներկայացնի ՍԱՏԲ՝ շատ հավանական է, որ ընտանիքը նպաստից զրկվի: Որպեսզի ընտանիքը նպաստ ստանա, նրա անապահովության միավորը պետք է կազմի 30 և ավել միավոր: Այս միավորը մի շարք գործակիցներով է հաշվվում, որոնցից մեկն էլ եկամուտն է: Ինչ խոսք, նպաստի գումարը մեծ չէ և հնարավոր չէ ընտանիքի նվազագույն պահանջները դրանով բավարարելը: Այդ պատճառով էլ նպաստառու ընտանիքներն ամեն կերպ ձգտում են պահել այդ 30 միավորը, և եթե աշխատում են, ապա նախընտրում են չգրանցված մնալ, որպեսզի և՛ նպաստ, և՛ աշխատավարձ ստանան: Սա է նաև պատճառ դառնում, որ սոցիալական աջակցության տարածքային բաժինների աշխատակիցներին իրենց պայմանների փոփոխության մասին տեղյակ չպահեն: Երբեմն, պարտականություններից խուսափելը նաև ժամանակ շահելու միջոց է դառնում: Այս առումով միանշանակ է, որ պետք է աշխատանքներ տարվեն հենց նպաստառուների պարտականությունների կատարման առումով անհրաժեշտությունը բացատրելու ուղղությամբ:

«Որպես ինֆորմացիա՝ էդ իրանց փոխանցվում ա, մի կողմից իրանք լրջությունը չեն հասկանում, երկրորդ՝ մտածում են, որ անապահով եմ, ինչի՞ պիտի ինձնից

հետգանձում անեն, քանի կարամ պետությունից օգտվեմ»:

Սոցիալական աշխատող, Երևան

«Գիտեն, որ անցնեն աշխատանքի, նպաստը կորելու ա, ամեն տարբերակ գիտեն, որ հարթեն, թաքցնեն, կամ եթե հայտնաբերում ենք, ասում են՝ ով չի աշխատում, կարա՞նք 18 հազարով ընտանիք պահենք: Եթե տեղափոխվում ա այլ բնակության վայր, կարող ա էդ պատճառով չստանա, ամիսներով թաքցնում են դա»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

«Նպաստառու ընտանիք – աշխատանք» առնչությունների հարցը

Անցնենք հետազոտության մյուս կարևոր բաժնին՝ նպաստառու ընտանիք-զբաղվածություն/աշխատանք առնչությունների հարցին: Այս մասում կշոշափվի նպաստառու-զբաղվածություն կապը հետևյալ հարցադրումների առանցքում՝ ի՞նչ խնդիրներ են առաջանում, երբ նպաստառուներն անցնում են գրանցված աշխատանքի, աշխատանքից ազատվելուց հետո ինչպես է տեղի ունենում նպաստի վերականգնումը, ի՞նչ ընթացակարգեր են պահանջվում և նման բնույթի այլ հարցադրումներ:

Եթե խոսենք ֆորմալ ընթացակարգերի մասին, ապա մինչև 30 օր աշխատելու դեպքում աշխատավարձը որպես եկամուտ չի գրանցվում և նպաստառուները չեն զրկվում նպաստից: Միայն անհրաժեշտ է, որ նպաստառուն գործատուի ստորագրությամբ տեղեկանք ներկայացնի ՍԱՏԲ, որտեղ պետք է հստակ նշված լինեն աշխատանքի ընդունվելու, աշխատանքից ազատվելու ամսաթվերը և աշխատավարձի չափը: Այստեղ խնդիր կարող է առաջանալ, եթե նպաստառուն աշխատանքից ազատվելու փաստաթուղթը ժամանակին չի ներկայացրել և

համակարգում դեռ նշված է, որ աշխատում է: Փաստաթղթի ուշացման հետևանքը կարող է նպաստի հետգանձումը լինել: Իսկ եթե աշխատանքն ավելի երկարատև է, քան 30 օրը և աշխատավարձի պատճառով ընդհանուր միավորը ընկնում է 30-ից, ապա ընտանիքը նպաստից զրկվում է: Աշխատանքից ազատվելուց հետո, եթե նպաստառուն ներկայացնում է ազատման փաստաթուղթը, ապա նպաստը վերականգնվում է արդեն հաջորդ ամիս: Այսինքն, ըստ ֆորմալ ընթացակարգի, մեկ ամսվա ընթացքում նպաստը կրկին վերականգնվում է: Սակայն սոցիալական աջակցության բաժինների ներկայացուցիչները նշում են, որ հնարավոր է այս գործընթացը երկար տևի, փաստաթղթերը ժամանակին չներկայացնելու պատճառով, որը կարող է լինել և քաղաքացիների, և գործատուի մեղքով: Վերջինը իր հերթին պետք է սպասի ամիսն ավարտվի, որպեսզի կարողանա անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրել: Երբեմն գործատուն հետևողական չի լինում կամ այլ պատճառներով ուշացնում է տեղեկանքը: Սոցիալական աջակցության կենտրոնների աշխատողները նաև նշում են, որ այդ ուշացումների պատճառով երբեմն տվյալների մուտքագրումը հետին թվով են անում՝ ի օգուտ նպաստառուների:

«Խնդիր է, որ նշված ժամանակահատվածում ուշացնում են այդ փաստաթղթերը, որովհետև կարգը խախտվում է: Քաղաքացին է հիմնականում ուշացնում: Գործատուի մոտ խնդիրն այն է, որ պետք է ամիսը լրանա, նոր տա տեղեկանքը: Ստացվում է հաջորդ ամսվա ակզբին է բերում, մենք հետին ամսով ենք մուտքագրում»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

«Ցանկացած ամիս էլ կարող է նորից դիմի նպաստի համար աշխատանքից դուրս գալուց հետո, կարգը շատ հստակ է, սահմանում է ժամկետները, ընթացակարգը, ով

որ դեպքում ինչ պետք է անի: Այստեղ ճիշտ կիրարկման խնդիրն է՝ և սպասարկողի, և շահառուի»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

Իրական խնդիրներն առաջ են գալիս այն ժամանակ, երբ այս անհրաժեշտ ընթացակարգերը չեն պահպանվում: Մասնավորապես, ամենատարածված դեպքը գրանցված աշխատելու փաստը գաղտնի պահելն է՝ այն հույսով, որ չեն բացահայտվի և նպաստն ու աշխատավարձը միասին կստանան: Սակայն, քանի որ սոցիալական աջակցության կենտրոնները գրանցված աշխատողների տվյալները ստանում են, հեշտությամբ գտնում են գրանցված աշխատողներին: Այստեղ միակ խնդիրն այն է, որ այդ տվյալները երբեմն ուշ են հասնում իրենց և հնարավոր է՝ մի քանի ամիս անց նոր հայտնաբերեն, որ նպաստառուն աշխատում է: Այդ դեպքում արդեն կիրառում են հետգանձման մեխանիզմը, ինչը հիմնականում հարթ չի անցնում:

«Եթե աշխատում ա հունվարին, մեր մոտ տվյալը կարող ա գա գարնանը, հետո հետգանձման խնդիր ա առաջ գալիս: Իսկ տեղյակ չեն պահում փոփոխության մասին, քանի որ ձեռք չի տալիս: Հետգանձում ա արվում, քաղաքացին բողոքում ա… ո՞նց վարվենք: Շատ խնդիրներ են առաջանում այդտեղ»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

Ստորև ներկայացված է մի պատմություն, երբ նպաստառու ընտանիքի անդամներից մեկը գրանցված աշխատանքի է անցել, սակայն պարտականությունների չկատարման, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների մասին քիչ տեղեկացված լինելու պատճառով ընտանիքը զրկվել է նպաստից, և հետգանձման

խնդրի առաջ է կանգնել: Դեպքը եղել է Գյումրիում:

«Ընտանիքը նպաստառու էր, 4 անչափահաս երեխա ուներ, ամուսինը անցել էր աշխատանքի՝ պահակ: Էստեղ և աշխատանքի, և նպաստի հետ կապված անիրազեկությունն էր: Ստացվել էր էնպես, որ ինքը գրանցված աշխատող է եղել, բայց չի իմացել, որ գրանցված է: Մի քանի ամիս հետո կազմակերպությունը լուծարվել էր, էդ ժամանակ նոր տեղեկանք էր գնացել սոցիալական ծառայություն, որ էս մարդը աշխատանքից ազատվել է, ու էդ ժամանակ էին հայտնաբերել, որ աշխատում է: Երբ որ սկսեց գործընթացը, նպաստը դադարեցրել էին, 300-400 հազար դրամ գումարի հետգանձման մասին էր խոսքը: Հետո պարզվել է, որ գրանցված էր 120 հազար աշխատավարձով, բայց էդ ընթացքում ստացել էր 50 հազար, այսինքն և գործատուի կողմից էր խնդիր եղել, և նպաստի համակարգի հետ էր խնդիր եղել: Դիմեցինք իրավաբան խորհրդատուին… քաղաքացու մեղքով էր, փաստաթղթով ամեն ինչ մաքուր էր, ինքը ինչ-որ փաստաթուղթ է լրացրել, երբեք չի կարդացել՝ ինչ է ստորագրում, ինչ աշխատավարձ է ստանում, նույնիսկ չի էլ իմացել, որ գրանցված աշխատող է: Այսինքն, գործատուների կողմից էլ կան օրենքի շրջանցումներ»:

ՀԿ սոցիալական աշխատող, Գյումրի

Սակայն գիտենք նաև, որ աշխատող նպաստառուների մի մասը գրանցված չէ: Քանի որ հիմնականում ցածր վարձրատրվող աշխատանքներ են կատարում, նպաստառուները նախընտրում են մնալ ստվերում, որպեսզի նպաստի գումարից բացի օգտվեն նաև իրենց հասանելի արտոնություններից ու ծառայություններից՝ առողջապահական, կրթական, էլեկտրաէներգիայի, գազի վճարների զեղչեր և այլն: Ընդ որում, չգրանցումը կատարվում է գործատուի հետ պայմանավորվածությամբ,

ինչն առաջին հայացքից երկու կողմին էլ ձեռնտու է: Սակայն, չգրանցված աշխատելու դեպքում առաջ են գալիս աշխատանքային ստաժի, կենսաթոշակի հարցերը, որոնցից, փաստորեն, զրկվում են ստվերում աշխատողները: Իսկ եթե այս ամենին ավելացնենք, որ այդ պայմանավորվածության արդյունքում շրջանցվում են մի շարք օրենքներ և իրավունքներ, ապա պատկերն ավելի մտահոգիչ կդառնա:

Ինչ խոսք, կարևոր է, որ աշխատողները նախընտրեն գրանցվել և դուրս գալ ստվերից, սակայն նպաստառուների պարագայում հարց է առաջանում, որը սոցիալական ոլորտի ներկայացուցիչներն առավելապես կապում են մտածելակերպի և տարեցտարի վերարտադրվող մշակույթի հետ: Խոսքն աշխատանքի և նպաստի (նպաստի գումար + արտոնություններ, անվճար ծառայություններ) միջև ընտրություն կատարելն է, որտեղ, ըստ նրանց, շատերն ընտրություն են կատարում ի օգուտ նպաստի: Եթե աշխատելու դեպքում ստանում են որոշակի գումար, որը սովորաբար մեծ չի լինում, ապա հաշվարկում են, թե որն է ավելի ձեռնտու: Ստացվում է, որ իրենց համար ավելի շահեկան է նպաստ և մի շարք արտոնություններ ստանալը, քան միայն այդ աշխատավարձի հույսին մնալը:

«Կամ չի էլ աշխատում, ասում ա՝ գնամ աշխատեմ 60 հազար ստանամ, որ հանես ճանապարհածախսի, ուտելիքի գումարը, ձեռք չի տալիս, սենց 30 հազար եմ ստանում, ավելի լավ ա»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Գյումրի

«Եթե պիտի գնա 60-80 հազարով փոռում աշխատի, նաև գիշերը ու 30 հազար դրամ նպաստը… Չի գնալու աշխատի, որովհետև ամբողջ օրն աշխատելու ա, տրանսպորտի, ընդմիջման փող ա ծախսելու, գալու ա 0 կանգնի: Ավելի ձեռք ա տալու էդ 30 հազարը»:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակից

«Զբաղվածության ծրագրով աշխատանք է առաջարկվել, բայց երկընտրանք է, գնա աշխատի, թե ոչ: Եթե աշխատի, կզրկվի արտոնություններից, երեխաներին հասանելի անվճար ծառայություններից»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

Վերոնշյալից, ըստ էության, հետևությունը մեկն է՝ նպաստների համակարգը թերի է, այն ինչ որ առումով պասիվ համակարգ է: Այսինքն, այն թույլ չի տալիս հասկանալ շահառուների իրական խնդիրները, և հետևաբար նաև դրանց լուծման հնարավորությունները: Այդ համակարգն ավելի շատ կախվածության մեջ է դնում ընտանիքներին նպաստից: Ցավոք, այն նաև նպաստում է նպաստառուի պասիվացմանը, այն չի խրախուսում մարդկանց՝ քայլեր ձեռնարկել իրենց վիճակը բարելավելու ուղղությամբ: Գործող համակարգը չի նպաստում, որպեսզի ընտանիքի վիճակն այնպես կայունանա, որ այն դուրս գա համակարգից և կարողանա ինքնուրույն շարունակել իր կենսագործունեությունը: Դեպի համակարգ մուտք կա, սակայն ելք՝ ոչ: Նշվում է նաև, որ եթե սոցիալական աջակցության բաժինների աշխատակիցներն ավելի լայն հնարավորություններ ունենային և ավելի ինքնուրույն լինեին որոշումների կայացման հարցում, ապա հնարավոր կլիներ նպաստառուների շահերից բխող որոշումներ կայացնել, ինչը նաև կմեծացներ համակարգի արդյունավետությունը:

«Համակարգը ենթադրում ա, որ կգաս կապացուցես, որ աղքատ ես, ու ես դրա համար քեզ կօգնեմ, չի ասում, որ կգաս կասես, որ ինչ որ բան քո մոտ չի ստացվում, ու ես կօգնեմ, որ էդ քո մոտ ստացվի ու անկախանաս: Համակարգը էսպես ա,

մուտք կա, բայց ելք գրեթե չի լինում: Ելք լինում ա մենակ էն իրավիճակում, երբ որ երեխաների 18 տարին լրանում ա մեծամասամբ»:

Սոցիալական աշխատող, Երևան

«Համակարգը ճկուն չի, կոշտ ա, թույլ չի տալիս իրավիճակը հասկանալ, որ նպաստը պետք է շարունակվի, չնայած որ մաման աշխատանքի ա անցել ու 4 անչափահաս երեխա ունի»:

Նպաստների համակարգի փորձագետ, Երևան

Եթե դիտարակենք աշխատանքի տեսանկյունից, ապա ներկայիս նպաստների համակարգը կարծես «սպառնալիք» լինի նպաստառուների համար՝ *«եթե աշխատես, նպաստից կզրկվես»*: Իսկ գտած աշխատանքը միշտ չէ, որ բարձր վարձատրվող է և հիմնականում կայուն չի լինում: Այս համատեքստում էլ նպաստառուն ավելի շահեկան է համարում չաշխատելը կամ ստվերում աշխատելը, քան դեպի անկայունություն գնալը:

«Կուզենայի, որ պետության կողմից ծրագրերն ավելի ակտիվ լինեին: Մենք պասիվացնում ենք քաղաքացուն, ասում ենք դու մի աշխատի, որ նպաստ ստանաս: Եթե աշխատես ու բերես եկամուտ, նպաստից կզրկվես: Այսինքն քաղաքացուն դրդում ենք, որ թաքցնի աշխատանքը, որ նպաստից էլ չզրկվի»:

Սոցիալական աշխատող, Գյումրի

Հարցազրույցների անցկացման ընթացքում սոցիալական ոլորտի ներկայացուցիչներին և ոլորտի փորձագետներին քննարկման համար ներկայացվել է հետևյալ իրավիճակը. հինգ անձից բաղկացած նպաստառու ընտանիք է՝ հայր,

մայր, երեք երեխաներ, որոնցից երկուսը անչափահաս են, մեկը՝ չափահաս և ուսանող: Ուսանողն անցնում է աշխատանքի և ստանում որոշակի գումար, որի միջոցով հիմնականում իր կարիքներն է հոգում և ընտանիքին, ըստ էության, չի օգնում, սակայն նրա աշխատելու փաստով պայմանավորված ընտանիքը զրկվում է նպաստից: Դեպքի քննարկումը հնարավորություն է տվել ավելի իրավիճակային հասկանալ խնդիրները և համակարգի բարելավման ուղղությամբ կոնկրետ լուծումներ առաջարկել:

Այսպես, եթե այս դեպքը դիտարկվում է բացառապես ընտանիքի շահերի տեսանկյունից, ապա սոցիալական ոլորտի ներկայացուցիչները ու ոլորտի փորձագետներն այն համարում են անարդար, քանի որ փաստացի ընտանիքի դրության կայունացում չի արձանագրվում, և այն շարունակում է մնալ անապահովության պայմաններում: Մինչդեռ, եթե դիտարկում ենք համակարգի տեսանկյունից, ապա արդար է համարվում այն առումով, որ եթե անապահովության միավորը ընկնում է, ապա ընտանիքը պետք է դուրս մնա համակարգից, որպեսզի այլ ընտանիքներ նույնպես կարողանան հաշվառվել և նպաստ ստանալ:

«Եթե ուսանողը կարողանում է աշխատել ու ընտանիքի եկամտի միավորը դուրս ա գալիս գործակցից, ընկնում է գործակիցը: 30 հազար եկամտից բացի զրկվում են նաև ամբողջ փաթեթից, դա խնդիր է: Բայց համեմատության մեջ էն մյուսն էլ էդ ամենը չունի: Եթե էնպիսի տարբերակ լինի, որ բոլորին տանք նպաստ, տանք, բայց պետք է գտնել ավելի խոցելիներին: Օրինակում իրենք ավելի քիչ խոցելի են, քան էն մարդիկ, որ դա էլ չունեն»:

Նպաստների համակարգի փորձագետ, Երևան

Այստեղ կրկին շեշտվում է համակարգի ոչ ճկուն լինելը: Անապահովությունը

հաշվարկվում է ըստ ընտանիքի, այսինքն, համարվում է, որ ընտանիքն է աղքատ, ոչ թե անհատը: Հետևաբար նաև, նպաստը տրվում է ընտանիքին, ոչ թե առանձին անդամներին: Այս տեսանկյունից ընտանիքը պետք է ընտրություն կատարի՝ կամ ուսանողը պետք է այդ տան հաշվառումից դուրս գա և առանձին ապրի, կամ էլ չաշխատի, որպեսզի ընտանիքը շարունակի նպաստ ստանալ և օգտվի արտոնություններից:

«Արդարության կանոն են դրել՝ տալիս եմ ընտանիքին, թե դու ոնց կօգտագործես անդամների կողմից բերված եկամուտները, քո խնդիրն ա, դու ես որոշում, բայց որ դիմում ես նպաստի համար, դիմում ես ամբողջ ընտանիքի համար, հետևաբար դա պետք ա հաշվի առնել»:

Սոցիալական աշխատող, Երևան

«Կանոնների տեսանկյունից արդար է: Արդեն իրանք որոշեն՝ կամ աշխատեն, կամ մնան ստվերում, որը պետությանը վնաս ա... որովհետև համակարգը սխալ ա, չի կարա արդար լինի, քանի որ շատ գերթիրախավորված ցանկացած սոցիալական աջակցության համակարգ ստվերային հատված ա ունենում, օգտվում են մարդիկ, որ չպետք ա օգտվեն»:

Սոցիալական աշխատող, Երևան

«Ինքը պետք ա գցի բռնի, որն ա նորմալ: Նպաստից կտրվելը չի նշանակում սոցիալական աջակցության բոլոր ծրագրերից զրկվել: Կօգտվի էլեկտրաէներգիայի, գազի զեղչի համակարգից, մյուս ծրագրերից, բայց զուտ ֆինանսական նպաստից, որը 30 հազարից պակաս ա, կզրկվի: Այսինքն, իրանց խնդիրն ա, որոշել, որն ա իրանց համար ձեռնտու»:

Այսպիսով, նշված իրավիճակի ներկայացումը վեր է հանում նպաստների համակարգի թերի կողմերը և անհատական ու իրավիճակային մոտեցում ցուցաբերելու առումով՝ էական խնդիրները: Եթե իրավիճակը դիտարկում ենք անհատի, բացառապես նպաստառու ընտանիքի շահերի տեսանկյունից, ապա խնդիրն ակնհայտ է: Ընտանիքի դրությունը փաստացի չի բարելավվում և արդեն գոյություն ունեցող խնդիրները շարունակում են մնալ՝ միաժամանակ առաջ բերելով նոր դժվարություններ: Մյուս կողմից, եթե իրավիճակը դիտարկվում է համակարգի տեսանկյունից, ապա արդարացվում է՝ 30 միավորից ընկնում է գործակիցը, հետևաբար ընտանիքը զրկվում է նպաստից՝ պահպանվում են բոլոր կանոններն ու ընթացակարգերը:

Ի՞նչ անել

Նպաստների համակարգի հիմնական նպատակներից է ընտանիքի կենսամակարդակի բարձրացումն ու կայունության ապահովումը: Սակայն, այն ներկայում միայն նպաստում է ընտանիքներին՝ հաղթահարել ծայրահեղ աղքատության շեմը: Պասիվ և չխրախուսող համակարգ լինելու պատճառով ընտանիքները որոշ դեպքերում տարիներով կախվածության մեջ են ընկնում դրանից և նախընտրում չաշխատել կամ աշխատել ստվերում, ինչն էլ բացասաբար է անդրադառնում ինչպես ընտանիքի, առհասարակ, այնպես էլ նրա առանձին անդամների վրա: Նախորդ բաժիններում նկարագրված խնդիրները հաշվի առնելով՝ սոցիալական ոլորտի ներկայացուցիչները և փորձագետները, ովքեր մեծ փորձ ունեն ոլորտում, նաև ներկայացրել են փոփոխությունների իրենց տեսլականը:

Նախ նրանք նշում են, որ պետք է ունենալ ծառայությունների ֆունկցիոնալ ինտեգրում: Սա հնարավորություն կտա սոցիալական աջակցության տարածքային կենտրոնների աշխատակիցներին նպաստ նշանակելուց բացի նաև այլ ծառայություններ առաջարկել շահառուներին: Ներկայում զբաղվածության պետական գործակալությունները և սոցիալական աջակցության կենտրոնները տարբեր կառույցների ենթակայության տակ են գտնվում, ինչը ենթադրում է չհիմնավորված բյուրոկրատիայի առկայություն՝ մի կառույցից մեկ այլ կառույց գնալ, մի տեղից մյուսը թղթեր տանել, ինչը էապես երկարացնում և բարդացնում է գործընթացը: Այդ երկու կառույցների միջև կա ֆորմալ փաստաթղթի վրա համագործակցություն, սակայն իրականում այն բավականին թույլ է արտահայտվում և այդքան էլ արդյունավետ չէ: Եթե նույն աշխատակիցը կարողանա նաև այլ ծառայություններ առաջարկել, ապա համակարգն ավելի ակտիվացնող կդառնա, քան հիմա է:

«Քանի որ կառուցվածքային փոփոխություններ են անհրաժեշտ, չենք կարողանում արդյունավետ աշխատանք իրականացնել, սահմանափակ հնարավորություններ ունենք որոշումներ կայացնելու հարցում»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

Հաջորդիվ, առաջարկվում է նպաստի համակարգի միջոցները վերաբաշխել: Մասնավորապես, նպաստ տրամադրել ոչ թե անապահով ընտանիքներին որպես մեկ միավոր, այլ հենց երեխաներին՝ մինչև որոշակի տարիք: Նաև առաջարկվում է, որ երեխայի համար գումարը ոչ միայն անապահով ընտանիքներին տրվի, այլ բոլորին, ինչը, սակայն, մեծ ռեսուրսներ է պահանջում:

«Ըստ վիճակագրության, կենսաթոշակն ավելի շատ ա ազդում աղքատության վրա, քան նպաստը, որովհետև համընդհանուր ա, հավասարապես հասնում ա բոլորին, ովքեր շահառու խմբում են: Նույնը կարա լինի երեխաների համար նպաստ, ինչը զգալի կնվազեցնի աղքատությունը»:

Սոցիալական աշխատող, Երևան

«Լավագույն տարբերակը կլինի, որ երեխային հատկացվի նպաստ, ոչ թե ընտանիքին: Ընտանիքի մյուս անդամներն էլ շահագրգռված կլինեն աշխատել»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Գյումրի

Երեխաներին տրամադրվող նպաստից զատ, պետք է նաև առանձնացնել աշխատունակ տարիքի մարդկանց խումբը: Այս դեպքում համակարգի խնդիրը պետք է լինի այդ մարդկանց աշխատաշուկայում ներգրավելը: Նպաստների

համակարգի հիմքում պետք է լինի ոչ այնքան մարդկանց գումար տալու, այլ նրանց աշխատաշուկայում դրսևորվելու գաղափարը: Գրեթե բոլոր մասնագետներն այն կարծիքին են, որ նպաստ պետք է տալ ոչ միայն այն ժամանակ, երբ նպաստառուն գործազուրկ է, այլ **նպաստի տրամադրումը պետք է այնքան շարունակվի, մինչև տվյալ ընտանիքի վիճակը կայունանա:** Այս առումով ողջամիտ ժամկետներ են սահմանվում վեց ամսից մինչև մեկ տարին, որի ընթացքում նպաստառուները հնարավորություն կունենան աշխատաշուկայում կայունանալ և ինքնուրույն ապահովել իրենց ընտանիքի կենսագործունեությունը: Սա պետք է արվի զբաղվածության ծրագրերը զարգացնելուն զուգահեռ (վերապատրաստման ծրագրեր, որոնց արդյունքում նպաստառուները կտիրապետեն աշխատաշուկայում նոր հմտությունների և գիտելիքների): Այդ ծրագրերն էական նշանակություն կունենան արդյունավետ ծառայությունների ինտեգրման պարագայում: Այս ամենը նպաստների համակարգն ավելի ակտիվ և արդյունավետ կարող է դարձնել: Սա կլուծի նաև կարևորագույն խնդիրներց մեկը՝ **նպաստառուների համար աշխատելն այլևս չի դիտարկվի նպաստից զրկվելու սպառնալիք:**

«Ընտանեկան, գործազրկության նպաստ լինի, ոնց կուզեն, կանվանեն, բայց ժամկետով, 6 ամիս հետո պիտի իմանա, որ էլ գումար չենք տալու, պիտի վերականգնվի էդ ընթացքում, միաժամանակ դասընթացների, վերապատրաստման ուղարկենք, մասնագիտություն սովորեցնենք, որ կարողանա աշխատանք գտնի, մինիմալ պահանջները բավարարի, ոչ թե ասի նպաստ ստանալու համար չգնամ աշխատանքի կամ թաքցնեմ ամեն ինչը»:

Սոցիալական աշխատող, Երևան

Աշխատանքը խրախուսելը և ավելի շատ նպաստառուների աշխատաշուկայում ներգրավելը նաև կնպաստի մտածողության, մշակույթի փոփոխությանը, քանի որ աշխատանքը, վարձատրությունից բացի, տալիս է նաև սոցիալական կապեր, ինքնակայացման հնարավորություն, ինքնագնահատականի բարձրացում և այլն: Սակայն աշխատատեղերի խնդիրը մնում է խիստ ակտուալ: Ակնհայտ է՝ որքան շատ աշխատատեղեր լինեն, այնքան շուտ մարդիկ կկարողանան աշխատաշուկա մտնել և անկախանալ համակարգից:

«…եթե երկու անգամ հարմար աշխատանք են առաջարկում, հրաժարվում է աշխատանքից, համակարգից դուրս թողնել: Բայց քանի դիմում է տարբեր տեղեր ու չի կարողանում աշխատանք գտնել, կախվածության մեջ են ընկնում համակարգից»:

Սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակից, Երևան

Եթե համակարգն ավելի ակտիվ և ճկուն դառնա, ապա հնարավոր կլինի նաև գնահատել շահառուների կարիքները, ռեսուրսները, հմտություններն ու գիտելիքները: Կարիքի գնահատումից հետո շահառուներին պետք է տալ անհրաժեշտ ռեսուրսներ և վերահսկել, մինչև նրանց վիճակը կայունանա և առավել ինքնուրույն դառնան: Գնահատման արդյունքում կարող է պարզ դառնալ, որ տվյալ շահառուին ոչ թե գումարն է անհրաժեշտ, այլ օրինակ զբաղվածության ծրագրում ընդգրկվելը, որևէ բժշկական ծառայությունից օգտվելը, կրթության համար զեղչ ստանալը, որևէ տեխնիկայի կամ նյութերի ձեռքբերումը և այլն: Այս համատեքստում նպաստը պետք է համարվի ոչ թե օգնության հիմնական, այլ հերթական ձևերց մեկը:

«Այս պարագայում կփոխվի նաև մարդկանց մտածողությունը, և սոցիալական

ծառայություններ կդիմեն ոչ թե գումարի համար, այլ՝ իրենց անհրաժեշտ օգնության»:

Սոցիալական աշխատող, Երևան

«Մարդիկ կան՝ 30 տարի նպաստառու ընտանիք են համարվում, պետք է օգնես, տես ինչ հմտություն ա պետք, տուր աշխատանք, իրա մասին մոռացի: Նպաստ տալը պետք ա ունենա իր իմաստը: Մինչև մարդը ինքը չաշխատի, աղքատությունը չի հաղթահարի: Կամ եթե ունի հաշմանդամություն, ես պետք է ապահովեմ, որ կարողանա աշխատի, ինքն իրեն պահի, էլ պետության հույսին չմնա»:

Նպաստների համակարգի փորձագետ, Երևան

Կարիքի գնահատումը և ճկուն մեխանիզմների ներդրումը թույլ կտան հասկանալ, թե ինչպես բաշխել նպաստի համար հատկացվող գումարը: Հնարավոր են դեպքեր, երբ ընտանիքի կայունացման համար անհրաժեշտություն կա տրամադրել, օրինակ, մի քանի ամսվա նպաստը միասին, ինչը տվյալ դեպքում ավելի արդյունավետ կլինի, քան եթե ամեն ամիս տրամադրվի այդ գումարը:

«Ես ունեմ իմ տարածքի բնակիչների համար x բյուջե ու փորձում եմ ինչ-որ ձևով էդ բյուջեն հստակեցնել: Օրինակ, պոմպ ա պետք տեղադրել, մի ամսվա գումարով չեմ տեղադրի, բայց 3 ամսվա գումարով կտեղադրեմ: Հետո մասնագիտական աշխատանքն ա սկսում, վերահսկում եմ՝ աշխատացնում ա, թե չէ, սերմնացու առել ա, թե չի առել, ինչ ա անում և այլն»:

Սոցիալական աշխատող, Երևան

Բացի վերոնշյալից, որն ավելի շատ համակարգային փոփոխություններ է

ենթադրում, առաջարկվում է նաև փոփոխություններ կատարել նպաստների գործակիցների մեջ, և ընտանիքների եկամտի համեմատաբար բարձր շեմ սահմանել, որն անցնելուց հետո միայն ընտանիքը կզրկվի նպաստից, այսինքն, մինչև որոշակի շեմ՝ աշխատավարձն էապես չանդրադառնա նպաստի վրա:

Նպաստառու ընտանիքների անդամների մասնակցությամբ ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների վերլուծություն

Ֆոկուս խմբային քննարկումների առանցքում եղել են հետևյալ հարցերը՝ նպաստ ստանալու փորձառություն, նպաստների տրամադրման համակարգին տեղեկացվածություն և նպաստները՝ զբաղվածության խնդրի համատեքստում: Վերլուծությունը նույնպես իրականացվել է այդ տրամաբանությամբ, իսկ ամփոփիչ հատվածում ներկայացված են քննարկման մասնակիցների կողմից մատնանշված հիմնական խնդիրները և դրանց կարգավորմանն ուղղված առաջարկները:

Նպաստ ստանալու փորձառություն

Ի՞նչ հիմքով են, սովորաբար, ընտանիքները նպաստ ստանում և որո՞նք են առավել տարածված հիմնավորումները: Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների կողմից նշած տարբերակներում ավելի շատ կրկնվում էին հետևյալները՝ բազմազավակ ընտանիքի փաստը, անչափահաս երեխաների առկայությունը, գործազրկությունը ու անաշխատունակությունը (Զբաղվածության գործակալությունում գրանցված լինելու նախապայմանով), միակողմանի ծնողազուրկ լինելու հանգամանքը, անապահովությունը (սոցիալական վատթար պայմաններ), հաշմանդամությունը: Թվարկվածներից զատ, մասնակիցները նաև նշել են եռամսյակային նպաստի ստացման փաստը, որը տրամադրվում է այն ընտանիքներին, ում անապահովության գործակիցը չի բավարարում ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու համար: Սրանք այն հիմնական գործնական դեպքերն են, որոցից ելնելով էլ քննարկման մասնակիցները և իրենց շրջապատի այլ

մարդիկ նպաստառու են դարձել: Տվյալ դեպքում, նշված անվանումները կարող են չհամընկնել նպաստների դասակարգման ֆորմալ անվանումների հետ, քանի որ նպաստառուների մոտ կարող են տպավորված լինել այլ անվանումներով կամ խոսակցական մեկնաբանումներով:

Անցում կատարելով նպաստ ստանալու բուն գործընթացին՝ նախ անդրադառնանք ներկայացվող փաստաթղթերին և ֆորմալ ընթացակարգերին: Ինչ վերաբերում է ներկայացվող փաստաթղթերին, ապա հարկ է նշել, որ երիտասարդների պարագայում ընդգծվում է համամատաբար քիչ տեղեկացվածությունը: Այս իրողությունը բացատրվում է այն հանգամանքով, որ փաստաթղթերի հավաքման և սոցիալական աջակցության բաժիններ ներկայացնելու հարցով հիմնականում ծնողներն են զբաղվում: Երիտասարդներին այս հարցը առնչվում է այնքանով, որքանով կպահանջվի նրանցից ուսումնական հաստատություններից կամ ժամանակավոր աշխատելու դեպքում՝ աշխատավայրից տեղեկանքներ բերել: ՍԱՏԲ-ներ ներկայացվող փաստաթղթերի շարքում մասնակիցները, որպես կանոն, նշում են ընտանիքի անդամների անձնագրերը, երեխաների ծննդյան վկայականները, կոմունալ վճարումների կտրոնները, բնակավայրից տեղեկանք՝ ընտանիքի գրանցված անդամների վերաբերյալ, ինչպես նաև իրենց տանը գրանցված, բայց չբնակվող քաղաքացուց համապատասխան փաստաթուղթ: Քաղաքացիները պետք է ներկայացնեն նաև փաստաթուղթ առ այն, որ ընտանիքի անդամներից որևէ մեկը չի աշխատում: Իսկ աշխատանքի անցնելու պարագայում, անհրաժեշտաբար, պետք է ներկայացվի տեղեկանք, որում հստակ պետք է նշված լինեն աշխատաժամերի, աշխատավարձի՝ ներառյալ հարկերը, ժամանակավոր աշխատողների դեպքում՝ ազատման վերաբերյալ տեղեկանք: Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները նշել են նաև բանկից՝ վարկերի, ապառիկի կամ պարտքեր չունենալու վերաբերյալ տեղեկանքի մասին, որը որպես պահանջ միայն

վերջին շրջանում է ներկայացվում[15]:

Կախված նպաստի տեսակից նաև անհրաժեշտ են՝ դպրոցականների պարագայում՝ դպրոցից տեղեկանք, ուսանողների պարագայում՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից տեղեկանք, մահացած անդամների մահվան վկայական, թոշակառուների դեպքում՝ թոշակառության գրքույկ, առողջական խնդիրների դեպքում՝ տեղեկանք բուժհաստատությունից, հաշմանդամությունը փաստող վկայական, գյուղական համայնքներում բնակվողների դեպքում՝ անասնագլխաքանակի մասին հավաստող փաստաթուղթ և այլն:

Մասնակիցները նշել են, որ փաստաթղթերի հավաքման գործընթացն իրականում երկար չի տևում, եթե չեն լինում հերթեր: Նպաստների համակարգում հաշվառվելուց հետո, արդեն դիմելու հաջորդ ամսվանից քաղաքացին կարող է ստանալ նպաստ, իսկ մինչ այդ տեսուչի կողմից իրականացվում է տնայց: Արդեն նպաստառուի կարգավիճակում, քաղաքացին տարին մեկ անգամ ներկայանում է ՍԱԲՏ և ստորագրում համապատասխան փաստաթղթեր: Փաստագրման ամսվա ընթացքում տեսուչները դարձյալ կատարում են տնայց:

Նպաստների ընթացիկ պայմանների փոփոխություններ մասնակիցները քիչ են նշել: Դրանք հիմնականում առնչվել են այն դեպքերին, երբ երեխաները դարձել են չափահաս և նվազել է նպաստի չափը, կամ ընտանիքում նոր երեխա է ծնվել և նպաստի գումարի չափը մեծացել է: Ինչպես նաև եղել են ընթացիկ բարձրացումներ, երբ Կառավարության որոշմամբ բարձրացել է նպաստառուների նպաստի չափը, որի համար նոր փաստթղթեր ներկայացնելու անհրաժեշտություն չի առաջացել:

[15] Հարկ է նշել, որ հետազոտության դաշտային փուլն իրականացվել է փետրվար-մարտ ամիսների ընթացքում, երբ նպաստից օգտվելու համար դեռ անհրաժեշտ էր վարկային պարտավորությունների վերաբերյալ փաստաթուղթ ներկայացնել: 2019 թվականի ապրիլի 25-ին, Կառավարության որոշմամբ, այդ նախապայմանը հանվել է, և նպաստառուներից այլևս չի պահանջվի այդ տեղեկանքը: Որոշման մասին տես՝ http://www.mlsa.am/?p=21612&fbclid=IwAR1avTIFnd68WUgKItQpwwE_uAXTLi9bQsiTPcxTWLJNCTHvKdx2mPRiKtI, [06.05.2019]

Քաղաքացիները հիմնականում տեղյակ են եղել, որ իրենց պայմանները համապատասխանում են նպաստառուի կարգավիճակին, այդ պատճառով էլ դիմել են ՍԱԲՏ: Որոշ դեպքերում, նրանք անձամբ տեղեկացված չեն եղել նպաստ ստանալու համար անհրաժեշտ պայմաններին և դիմել են ՍԱՏԲ ծանոթների ու բարեկամների հուշումով: Հատկանշական է, որ երիտասարդների պարագայում հաճախ է հնչում այն տեսակետը, որ «*ինչքան իրենց հիշում են, ընտանիքը նպաստառու է*», որը որոշ դեպքերում նշանակում է, որ նպաստառու լինելը դարձել է ընտանիքի բնութագրման անբաժան մասը:

Նպաստների համակարգից տեղեկացվածությունը

Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները նպաստների համակարգը կարգավորող օրենսդրության մասին տեղեկացված էին որոշակի չափով: Նրանք նշել են նպաստառուներին տարբերակող բալային սանդղակի առկայության մասին՝ վերստին ամբողջապես չտիրապետելով դրա վերաբերյալ տեղեկատվությանը:

«…Բալային սանդղակ կար, որ էդ բալային սանդղակից ցածր նպաստառուներին տրամադրվում էր նպաստ»:

Գյումրի, ընտանեկան նպաստ

Մասնակիցները հիմնականում տեղեկացված են սոցիալական ապահովության ծրագրի մասին, որը սահմանում է անապահով ընտանիքներին՝ ըստ անապահովության չափորոշիչների: Դրա հիմքում ընկած *է գույքի բացակայությունը (օրինակ՝ ավտոմեքենա, անասուններ և այլն, ինչով հնարավոր է եկամուտ ստանալ), եկամտի աղբյուրի բացակայությունը, կերակրողից զրկված լինելը,*

ամուսնալուծությունը, ամուսնու մահացած լինելը, հաշմանդամության կարգը, ընտանիքում գրանցված աշխատողի բացակայությունը, տանը գրանցված անչափահաս երեխաների առկայությունը:

Այս չափանիշներին համապատասխանությունը վերահսկվում է տեսուչների կողմից, ովքեր, նպաստառուների վկայակոչմամբ, պարբերաբար կատարում են տնայցեր և չափանիշների մեջ մտնող պարտադիր բաղադրիչները ստուգման ենթարկում, օրինակ՝ տան վիճակը, գույքի և աչք գրավող այլ իրերի առկայությունը: Որոշ դեպքերում, տնայցերի արդյունքում քաղաքացիների նպաստ ստանալը կարող է կասեցվել: Նման որոշման վրա, ըստ քննարկման մասնակիցների, կարող են ազդել հետևյալ գործոնները՝ տանը գրանցված աշխատողի փաստացի ներկայությունը, անշարժ գույքի կամ թանկարժեք իրերի առկայությունը, երեխաների չափահաս դառնալու փաստը, բանկային հաշվի, այլ եկամուտների գոյությունը, ապառիկի, վարկի կամ ավանդի առկայությունը: Նշվում է նաև առքուվաճառքի գործընթացի մեջ գտնվելու փաստը, օրինակ, եթե գրանցված ես մի տանը, որի հետ կապված առքուվաճառք է տեղի ունենում: Մասնակիցները մատնանշել են նաև մասնավոր գործոններ, օրինակ, երեխաների վճարովի խմբակներ՝ մարզական կամ մշակութային, հաճախելը այն հիմնավորմամբ, որ գումար չունենալու պարագայում ինչպե՞ս է հնարավոր դրա ապահովումը, կամ, օրինակ, գազի սպառման ծավալների աննախադեպ շատ լինելը: Միաժամանակ, կախված նպաստի տեսակից, քաղաքացին կարող է գույք կամ այլ թանկարժեք իր ունենալ, որը չի խոչընդոտի նպաստ ստանալուն: Ցածր աշխատավարձը, եթե չի անցնում համապատասխան շեմը, նույնպես չի կարող նպաստից զրկվելու գործոն դառնալ:

Արտոնությունների մասին խոսելիս մասնակիցները նշել են ուսման վարձի զեղչի մասին, որը կախված է ուսանողի միջին որակական գնահատականից, այլ կերպ ասած՝ որքան բարձր է առաջադիմությունը, այնքան մեծ է զեղչը: Ուսման վարձերի

զեղչերի ծրագրեր կան, որտեղ կոնկրետ նշված են սահմանափակումները: Ուսանողն ամբողջապես ազատված է ուսման վարձից, եթե նպաստառու և միակողմանի ծնողազուրկ է: Մասնակիցները նշում են, որ ուսանող նպաստառուների զեղչի չափը որոշելիս, բացի առաջադիմությունից, կարևորում են նաև բազմազավակ ընտանիքի անդամ լինելու և բանակում ծառայություն անցնելու փաստերը:

«Դե ես ինստիտուտ որ ընդունվել եմ անվճար, բանակ գնացի, եկա, հետո երկրորդ կուրսում անվճարից որ ընկա, իմացա, որ էդպես բան կա, որ թուղթ կներկայացնենք, կզեղչվի: Եթե չեմ սխալվում, 50% էր զեղչը, ճիշտ ա՝ իմը մի քիչ շատ եկավ զեղչը, գերազանցիկ էի»:

Գյումրի, ընտանեկան նպաստ

Մասնակիցները նաև նշել են առողջապահական զեղչերի, անվճար բժշկական ծառայությունների մասին: Օրինակ, երբ լրանում է քաղաքացու 18 տարին և նա նոր բժշկական քարտ է ստանում, շարունակում է օգտվել անվճար բժշկական ծառայություններից: Հատկանշական է, որ այս առումով, նույնպես, ակնհայտ էր մասնակիցների թերի տեղեկացվածությունը:

«Էս վերջերս եմ լսել, 6 տարի է տանս կողքը, որ նպաստառուներին մեր փողոցի ատամնաբուժարանը անվճար ատամներ է սարքում, իմացել եմ 4 օր առաջ, բալային կարգով է: Եթե 40-ից բարձր է, ավելի շուտ կանեն, եթե 40-ից ցածր է, մի քիչ ուշ կանեն, կտանեն կբերեն»:

Գյումրի, սոցիալական նպաստ

Մասնակիցներն աջակցության շրջանակներում նշել են երեխաների համար բակային ճամբարների կազմակերպումը, դպրոցներում գրքերի վարձերի բացակայությունը, հագուստի տրամադրումը և այլն: Կան նաև կոմունալ վճարումների հետ կապված որոշակի զեղչեր:

Մասնակիցները խոսել են նաև տարբեր կազմակերպությունների կողմից նպաստառուներին որոշակի արտոնություններ տալու մասին: Այս իմաստով նշվել է, որ հաշմանդամության նպաստ ստացողների համար իրավիճակն ավելի բարվոք է, քանի որ, մի կողմից չեն կտրվում նպաստից, մյուս կողմից նրանց խնդիրներով և աջակցության հարցերով զբաղվող կազմակերպությունները պետության կողմից հարկային արտոնություններ են ստանում, եթե հաշմանդամություն ունեցող քաղաքացիների են աշխատանքի ընդունում:

Տարբեր պետական և համայնքային կառույցների կողմից տրամադրվող օժանդակությունը նույնպես առաջնահերթ տրվում է նպաստառուներին. օրինակ, ցորեն կամ ձեթ, քաղաքապետարանի կողմից փոշեկուլ, երեխաների համար ներկայացման տոմսեր, առաջին դասարանցիների համար գրենական պիտույքներ և այլն: Միաժամանակ, մասնակիցներից շատերն այն կարծիքին են, որ պետք է այդ արտոնություններից և օժանդակությունից օգտվելու համար պահանջատեր լինել: Մասնակիցների գնահատմամբ՝ **արտոնություններն ավելի մեծ կարևորություն ունեն, քան գումարային տեսքով նպաստը:**

Նպաստերի համակարգի վերաբերյալ ընթացիկ նորություններին մասնակիցներն առանձնահատուկ ուշադրությամբ չեն հետևում: Օրինակ, նպաստների բարձրացումների մասին կարող են տեղեկանալ հենց գումարը ստանալու պահին: Որպես տեղեկատվության ստացման աղբյուրներ՝ քննարկման մասնակիցները նշում են համացանցն ու հեռուստատեսությունը: Նպաստառուները միմյանց հետ պարբերաբար քննարկում են նպաստների հետ կապված խնդիրները: Այս առումով

մեծահասակներն առավել ակտիվ են: Իսկ երիտասարդության շրջանում, կարելի է ասել, առավել իներտ մոտեցում կա:

«Զեղչերի համար, ենթադրենք, ասում են նպաստառու ես, դու զեղչի ես մասնակցում, բնականաբար զգուշացնում ես նաև մնացածին, որ նպաստառուների համար էսպիսի զեղչեր կան»:

Գյումրի, ընտանեկան նպաստ

Նպաստների համակարգի հետ կապված հետաքրքրող հարցերի դեպքում մասնակիցները, որպես կանոն, դիմում են փոստային ծառայություն, թաղապետարան, գյուղապետարան, քաղաքապետարան, սոցիալական աջակցության տարածքային բաժիններ: Տարածված է նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում աշխատող ծանոթների միջոցով հետաքրքրող հարցերը պարզաբանելը: Հաճախ շահառուները իրենց հուզող հարցերի պատասխանները փորձում են գտնել համացանցում:

Մասնակիցները կարևորում են քաղաքացիների իրազեկվածության խնդիրը: Նրանք գտնում են, որ հատկապես հեռուստատեսությամբ և ինտերնետով պետք է պարբերաբար տեղեկություններ հաղորդվի համակարգում իրականացված փոփոխությունների և ընթացիկ հարցերի վերաբերյալ:

«Ինձ թվում ա՝ ճիշտ կեղնի, որ ինտերնետային մանրացած բացատրություն լինի, որովհետև, թեկուզ, հասնելը ինչ որ մի տեղ, ենթադրենք, գյուղերից հասնեն քաղաք՝ տեղեկանալու համար կամ ասենք քաղաքում են, բայց հարմար չէ, հերթը շատ է: Ինձ թվում է՝ ինտերնետային տարբերակը շատ հեշտ ու հասանելի է»:

Գյումրի, ընտանեկան նպաստ

Ըստ մասնակիցների՝ նպաստների համակարգին առնչվող խնդիրներում,

առհասարակ, պատասխանատուն պետք է լինեն սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակիցները: Շատ բան կախված է հենց նրանց բարեխղճությունից: Սակայն, սա շեշտելուց զատ, մասնակիցները փաստում են, որ նպաստառուները իրենց հուզող հարցերի պատասխանները ստանալու առումով, հազիվ թե, խոչընդոտների հանդիպեն:

Ինչ խոսք, թեժ գծի անխափան աշխատանքն էլ կարող է ապահովել քաղաքացիներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները: Միաժամանակ, **կարող են գործարկվել տեղեկատվական հարթակներ, որոնցում պարզ և մատչելի շարադրված կլինեն մարդկանց հետաքրքրող բոլոր հիմնական հարցերը, այսպես կոչված, հաճախակի տրվող հարցերը**: Այլընտրանքային տարբերակ է նաև հեռուստացույցով գովազդի փոխարեն ինֆորմացիոն տեսահոլովակների ցուցադրումը:

Նպաստների տրամադրման խնդիրն աշխատանքի տեղավորման համատեքստում

Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներն աշխատանքային տարբեր փորձառություն ունեցող քաղաքացիներ են եղել. նրանց մեջ են և անաշխատունակներ, և գործազուրկներ, և չգրանցված աշխատողներ, և այնպիսիք, ովքեր գրանցված աշխատելու պատճառով դադարել են նպաստ ստանալ, հետո միայն վերականգնվել են այդ համակարգում: Ներկայում հատկապես շատ են չգրանցված աշխատողները, քանի որ դա բոլոր կողմերին էլ, կարծես, ձեռնտու է:

«Գործի տեղավորվելը էսպես է. երբ դու ընդունվում ես գործի, իմ հետ շատ ա եղել, ես բախտի բերմամբ, թե պատահմամբ աշխատել եմ համ նպաստ ստացած

ժամանակ, համ նպաստից հետո: Երբ որ գործատուի մոտ ես գնում, առաջին հարցը տալիս են՝ նպաստ ստանում ե՞ք կամ գրանցվելը քո վրա ազդեցություն կունենա՞, ու կախված քո պատասխանից, արդեն ծառայություն մատուցող են գրանցում կամ աշխատող: Եթե դու ծառայություն մատուցող ես գրանցվում ու քո աշխատավարձը 30000-ից պակաս ա, ինքը նպաստի վրա չի անդրադառնում, էդպես ոչ հարկ ես տալիս, ոչ իրանք են քաշքշուկի մեջ ընկնում, ոչ էլ քեզ են կանչում ստեղ ընտեղից»:

Գյումրի, ընտանեկան նպաստ

Աշխատել, թե շարունակել կայուն նպաստ ստանալ երկընտրանքը նպաստառու ընտանիքների անդամները սովորաբար միասին են լուծում և վերջնական որոշում կայացնում: Բացառություն են այն դեպքերը, երբ առաջարկվող աշխատավարձն այնքան բարձր է, որ մեկ անձը կարող է բոլորին ապահովել: Այլ կերպ ասած՝ այս ընտրությունը հիմնված է ռացիոնալ, սառը հաշվարկի վրա:

Մասնակիցների՝ աշխատել, թե շարունակել կայուն նպաստ ստանալ երկընտրանքի հանգուցալուծման վրա ազդում են մի քանի հիմնական գործոններ: Նախ կարևոր են աշխատավարձի չափը և աշխատանքային գրաֆիկը:

«Եթե աշխատավարձս իրոք բարձր լիներ, բնականաբար կընտրեի աշխատանքը, նախ միջավայրը, դուրս գալ, հետո մեզ ինքներս շատ պետք է միջավայր, դուրս, շփում, մարդկային հարաբերություններ, ծանոթություն, էնպես որ ավելի գերազանց կլիներ աշխատանքը»:

Գյումրի, սոցիալական նպաստ

Փաստորեն, ակնհայտ է, որ բարձր աշխատավարձի դեպքում նախապատվությունը տրվում է աշխատելու տարբերակին, քանի որ այն մասնագիտական զարգացում է

ապահովում, շրջապատն է փոխվում, միջանձնային հարաբերություններ են ձևավորվում: Որոշ դեպքերում մասնակիցները նշում են, որ կարելի է սկզբնական շրջանում ավելի ցածր աշխատավարձով աշխատել՝ հետագայում դրա բարձրանալու հստակ ակնկալիքով: Մասնակիցները նաև այն համոզմունքն են արտահայտել, որ այդ դեպքում ստացած կրթությունը չի իմաստազրկվի:

Կարևոր են նաև աշխատանքի հեռանկարայնությունն ու համապատասխան փորձի ապահովումը, աշխատանքի բնույթը՝ մշտական, թե ժամանակավոր լինելը, աշխատանքային ստաժի ապահովումը և այլ գործոններ: Մասնակիցներից մեկն այն կարծիքին էր, որ հնարավոր է նպաստների համակարգն ապագայում առհասարակ վերանա, իսկ աշխատանք ունենալու պարագայում կարող ես կայուն վաստակել:

Աշխատանքի հետ կապված արտոնությունները նույնպես կարևոր են, քանի որ այս դեպքում ընտանիքը զրկվում է սոցիալական աջակցության տարբեր ծրագրերից: Այսինքն՝ արտոնությունները կարող են էական գործոն դառնալ, որպեսզի նախապատվությունը աշխատելուն չտրվի:

Մասնակիցները կարևորել են նաև մասնագիտական աշխատանքի գործոնը, որի պարագայում անմիջապես կնախընտրեն աշխատելը: Վերոբերյալ երկընտրանքի լուծումը մեծապես կախված է նաև աշխատանքի բնույթից, եթե այն հոգեհարազատ է, համապատասխանում է մասնակցի մասնագիտական որակներին և դրա շնորհիվ նա ավելի բարձր դիրքի կհասնի, նույնիսկ այն դեպքում, երբ սկզբնական շրջանում (հետագայում աշխատավարձի բարձրացման ակնկալիքով) աշխատավարձն ավելի ցածր լինի նպաստից: Սակայն, եթե աշխատավարձի չափը կայուն ցածր լինի և հեռանկարում բարձրանալու միտում չունենա, ապա կնախընտրեն սպասել ավելի լավ առաջարկի: Բացի այդ, այս երկընտրանքի համատեքստում մասնակիցները հատուկ կարևորություն են տալիս նաև տարիքային գործոնին՝ որպես որոշում կայացնելու բաղադրիչ:

«Ընձի կթվա՝ էդ տարիքայինի հետ էլ է կապված, օրինակ էդ նույն հարցը եթե տաք 40 տարեկան կամ բարձր մեծահասակներին, ովքեր արդեն ընտանիք ունեն, աշխատանք-նպաստ տարբերակի դեպքում իրանք կասեն նպաստը, որովհետև իրանք ընտանիք կպահեն, իսկ մեր դեպքում երիտասարդ ենք ու մեր համար, բնականաբար, աշխատելը ավելի կարևոր է, քան թե սպասելը, թե պետությունը մեզ երբ պիտի էդ փողը տա: Այսինքն, իմ կարծիքով, էդ տարիքային խմբի հետ կապված պատասխանները ուրիշ կլինեն»:

Գյումրի, ընտանեկան նպաստ

Երիտասարդները նշում են, որ հիմնականում մտածողությունից է կախված վերոբերյալ երկընտրանքի հանգուցալուծումը՝ աշխատելը, թե՞ նպաստ ստանալը: Այս հարցում կարևորն այն գիտակցումն է, **որ ողջ կյանքում չես կարող ապրել նպաստով, և վաղ թե ուշ պետք է աշխատել:**

Միաժամանակ, մասնակիցները նշում են, որ շատերը, այնուամենայնիվ, նախընտրում են չաշխատելը՝ նպաստից չկտրվելու համար: Սակայն, քիչ չեն նաև մարդիկ, ովքեր նպաստի հետ կապ չունեցող պատճառներով են հրաժարվել աշխատանքից՝ աշխատանքային անհարմար ժամեր, փոքր տարիքի երեխաների առկայություն, տարիքային սահմանափակում և այլն:

Առանձնակի կարևոր է՝ ցածր աշխատավարձի պարագայում նպաստից չկտրվելու գաղափարը: Ըստ մասնակիցների՝ որպեսզի ընտրության առջև չկանգնեն՝ նպաստ, թե աշխատանք, ցածր աշխատավարձով աշխատանքը թող թույլատրվի գրանցել, և նպաստառուն գրանցված աշխատի՝ միաժամանակ նպաստից չկտրվելով:

Նպաստների համակարգի հիմնական խնդիրները. իրավիճակի նկարագրություն

Խնդիր 1. - Ներկայում համակարգն այնպես է գործում, որ քաղաքացու նպաստ ստանալը կասեցվելուց հետո նա և իր ընտանիքը զրկվում են նաև արտոնություններից, մինչդեռ կարևորը ոչ այնքան գումարն է, որքան տրամադրվող արտոնությունները:

«Ստեղ մի հատ ուրիշ նրբություն կա՝ նպաստը մենակ չնայենք որ էդ 25-26000 դրամ օգնությունն է, նաև որ դու սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչ ես, համալսարանում լիքը զեղչերի կարող ես մասնակցել, լիքը արտոնություններից կարող ես օգտվել: Այսինքն՝ եթե ես 60000 ստացա, ու էդ 26000-ը չստացա, ես լիքը շանսերից կզրկվեմ, այսինքն՝ ես համաձայն եմ մի տվեք փողը, բայց էն արտոնությունները, որոնցից ես պետք է օգտվեմ, ես պարտավոր եմ շարունակել էդ ամեն ինչից օգտվել, որովհետև երբ էդ 60000-ը որ ստացա, ինձ ոչ մի ձև չօգնեց, որ ես վարձ վճարեմ, 400000 վարձ տալ 60000 դրամով, շատ դժվար է, բայց երբ որ դու 400000-ի տեղը 150000 կվճարես, ուրիշ պատմություն է»:

Գյումրի, ընտանեկան նպաստ

Լուծում - Մասնակիցները կարևորել են արտոնությունները, որոնք որպես նպաստառու ստանում են: Նրանք նշել են, որ կարող են աշխատելու դեպքում նպաստ չստանալ, բայց արտոնություններից չզրկվեն, օրինակ՝ ուսման վարձի զեղչեր, կոմունալ վճարների զեղչեր և այլն:

Խնդիր 2. - Մասնակիցները նշել են նաև. մարդիկ այդքան էլ իրազեկված չեն, որ կարող են օգտվել որոշակի արտոնություններից ու անվճար ծառայություններից: Օրինակ, մասնակիցներից մեկն անձամբ է պոլիկլինիկայում տեսել, թե ինչպես է

բժիշկը նպաստառուից գումար գանձում այն դեպքում, երբ այդ ծառայությունն անվճար է: Դպրոցներում նույնպես կան արտոնություններ, օրինակ՝ դասագրքերի համար չվճարելը, բայց որոշ դեպքերում դասղեկները չեն զգուշացնում, իսկ աշակերտներն ու ծնողները տեղյակ չեն, որ նրանք կարող են անվճար ստանալ դրանք: Բացի այդ, որոշ դեպքերում ուղղակի բացակայում է վերահսկողությունը: Արդյունքում նպաստառուն չի ստանում իր հասանելիք արտոնությունը և ծառայությունը:

«Եթե պահանջող ես, գիտես քո իրավունքները... օրինակ, իմ պապան էդ տեսակ մարդ ա, անկապ էդ թղթերը չի սարքի տանի, բայց եթե իրան օրենքով հասել ա էդ գումարը, կպահանջի, շատ մարդիկ, որ սուս են մնացել ու տեղեկացված չեն եղել, խեղճ են եղել, տակով էին անում»:

Երևան, ընտանեկան նպաստ

Լուծում - Անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը, իսկ նպաստառուներն էլ իրենց հերթին պետք է պահանջատեր լինեն և քաջատեղյակ՝ իրենց իրավունքներին:

Խնդիր 3. - Առկա է նաև նպաստառուների բազմակողմանի անիրազեկվածության խնդիր: Որոշ դեպքերում նպաստների պայմաններին նրանց նախապես չեն ծանոթացրել կամ նրանք չեն ծանոթացել, և փաստաթղթերի տակ ուղղակի ստորագրել են: Միայն Փարոս համակարգի գիրքն են նախապես տրամադրում:

Լուծում - Այս առնչությամբ մասնակիցները տարբեր լուծումներ են առաջարկում: Օրինակ՝ բրոշյուրներ տպել ու նպաստառուների հասցեներով ծանուցումներ ուղարկել: Կարևոր է, որ դրանք լինեն արտահայտիչ, որպեսզի մարդիկ ցանկություն ունենան կարդալ և ուսումնասիրել: Եթե դժվարություններ կան այդ առումով, ապա

կարելի է բրոշյուրների բաժանումը կազմակերպել փոստային բաժանմունքներում կամ նպաստ ու թոշակ բաժանող աշխատակիցը հասցնի տներ: Այս խնդրի լուծումը կարևոր է, քանի որ ոչ բոլորն իրենց տներում ինտերնետ ունեն և կարող են օգտվել այս կամ այն կայքից կամ հավելվածներից: Մասնակիցները կարևորում են նաև փոստային բաժանմունքների աշխատակիցների տեղեկացվածության հարցը: Հատկապես խոսքը վերաբերում է ճիշտ ուղորդումներին, մասնավորապես կոնկրետ հարցերով ում դիմեն նպաստառուները (հեռախոսահամարների առկայություն):

Մասնակիցները կարևորել են նաև սոցիալական աջակցության համակարգում որևէ աշխատակցի կամ ստորաբաժանման առկայությունը, որը տեղյակ լինի քաղաքացիների հուզող հարցերից և սպառիչ պատասխաններ տա նրանց: Առհասարակ, վերահսկողությունը պետք է ուժեղացվի: Պաշտոնատար անձինք պետք է հսկեն, որ բոլորն իրենց գործառույթները պատշաճ մակարդակով իրականացնեն:

Ըստ մասնակիցների՝ կարող է արդյունավետ լինել նաև նպաստների վերաբերյալ հեռուստահաղորդումների եթեր հեռարձակումը: Նրանք կարծում են, որ հեռուստացույցով քիչ է լուսաբանվում այդ թեման և քաղաքացիները տեղյակ չեն իրենց իրավունքներին, մինչդեռ հեռուստացույցը բոլորին հասանելի տեղեկատվություն ստանալու միջոց է:

Մասնակիցները կարծում են, որ կարելի է նաև ինտերակտիվ կայք ստեղծել, որում նպաստառուները կարող են ավտոմատ գրանցված լինել, և իրենց ծանուցումներ փոխանցվի, իսկ օնլայն չատում իրենց հուզող հարցերը ներկայացնեն և էլեկտրոնային նամակ-պատասխաններ ստանան: Սակայն, այս միջոցը հասանելի չէ բոլորին: Ամեն դեպքում, մասնակիցները կարևոր համարեցին նախապես ծանուցելը, որովհետև լինում են դեպքեր, երբ նրանք այցելում են ՍԱՏԲ-ներ, տեղում տեղեկանում, որ կտրվել են նպաստից: Ինտերնետային կայքի առկայությունը կօգնի

նաև փոստի աշխատողների աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպել:

Խնդիր 4. - Նպաստառուներն առանձնահատուկ նշում են ապառիկների հետ կապված խնդիրները:

«Ասում են, որ եթե նպաստառու ես, ընդհանրապես բանկերի հետ խնդիր պետք է չունենաս, ասենք ապառիկ չգրվես, ոչ մի բան չունենաս, ասենք կարող ա վարկ եմ վերցրել հիվանդության համար, կամ, օրինակ, տանը չունեմ պլանշետ, նոթբուքը փչացել է, մտածել եմ, որ սարքեմ նորից կփչանա, ասենք հեռախոս եմ գրվել շատ քիչ 60000-ով, որ կարողանամ երեխային ապահովեմ դասերի համար ինտերնետ, հիմնականում դա է պատճառը եղել, հիմա դպրոցներում պարտադրված է ինտերնետային կապը: Ինձ զանգում հարցնում են՝ էդ բանկի հետ խնդիր ունե՞ս, արդեն բանկից տուր ու ա՞ռ: Բայց չէ՞ որ ես խիստ անհրաժեշտության համար եմ դիմել, եթե ես ունենայի էդ 64000 դրամը, ես հիմար չէի, կգնայի մեկից կգնեի, տոկոս էլ չէի մուծի երկու տարի էն էլ: Վերջը տուն է, ապրում ենք, վերջը մեր երեխաներն էլ են դուրս ու ներս անում»:

Գյումրի, սոցիալական նպաստ

Լուծում - Ապառիկների առկայությունը պետք է հաշվի չառնվի, քանի որ փոքր աշխատավարձի մի փոքր մասն էլ նպաստառուները կարող են տրամադրել ապառիկին:

Խնդիր 5. - Նույնատիպ խնդիր է նաև դրսից գումար ստանալը:

«Էդ աբսուրդային բաներ են, առաջարկում են, որ դու հեչ բան մի արա, նստի ու սպասի ամեն ամիս էդ 30000 դրամին՝ ապառիկ մի գրվի, դրսից թող քեզ փող

չուղարկեն, ասենք ախպերդ է կամ չիդեմ ով է, ամիսը օգնություն կղրկե՝ թեկուզ 2000 ռուբլի՝ 14000 դրամ, չբդի ղրկե՞»:

Գյումրի, սոցիալական նպաստ

Լուծում - Դրսից ուղարկված գումարը (հատկապես փոքր գումարները) որևէ ազդեցություն չունենա նպաստի վրա:

Խնդիր 6. - Անչափահաս երեխաների համար տրամադրվող նպաստի պարագայում 18 տարեկանի շեմը նույնպես խնդրահարույց է.

«18 տարեկանի սահմանը իմ կարծիքով շատ վատ է, օրինակ, ես եթե 18 տարեկան եմ, դեռ կսորվիմ ու եթե իրան կկտրին, անկախ ինձնից ես ոնց որ արդեն ավելորդ հոգս լինեմ ընտանիքիս համար, արդեն մտքիդ գալիս է աշխատես, որ գոնե ծնողիդ բան չեղնի, ըստ այդմ արդեն ուշադրությունը կկորի ուսումի հանդեպ»:

Գյումրի, ընտանեկան նպաստ

Լուծում - Մասնակիցները նշում են, որ առավել նպատակահարմար կլիներ, որ շեմը սահմանվեր 20 տարեկանը: Բացի այդ, մասնակիցները նշել են, որ այստեղ ճնշումը երկկողմանի է՝ մի կողմից, իրենց չափահաս դառնալով պայմանավորված զրկվում են նպաստից, մյուս կողմից, գնում են սովորելու, որը շատ դեպքերում վճարովի է և իրենք արդեն չեն օգտվում արտոնություններից:

Խնդիր 7. - Սովորաբար, ըստ մասնակիցների, մարդիկ չեն աշխատում, որովհետև նույնիսկ նպաստից ցածր աշխատավարձի դեպքում, զրկվում են նպաստից: Այդ պատճառով էլ նախընտրում են չաշխատել: Մասնակիցները կարծում են, որ ցածր

աշխատավարձի դեպքում ճիշտ չէ նպաստից զրկելը: Շատ դեպքերում այդ հանգամանքն ապամոտիվացնում է մարդուն աշխատել, քանի որ չաշխատելով, ըստ էության, նույն գումարը ստանում են: Միաժամանակ, շատերը նախընտրում են չգրանցված աշխատելը:

Լուծում - Ինչ խոսք, սա նախևառաջ բխում է պետության շահերից, քանի որ գործատուները կգրանցեն նպաստառու ընտանիքների անդամներին և կվճարեն հարկերը: Դե իսկ նպաստառուներն էլ նպաստ ստանալու հնարավորությունից չեն զրկվի: Նաև նշում են, որ կարելի է ստեղծել նպաստառուների համար աշխատատեղեր, որտեղ նրանք առավել քիչ հարկեր կտան իրենց աշխատավարձերից:

«Ինչը կփոխեի... որ մարդը, որ նպաստ ա ստանում, իրան թույլատրեին որ ինքը գրանցված աշխատի, որովհետև էդ նպաստով ինքը չի կարա ուղղակի ապրի, էդ 20000 կամ 23000 դրամը մի 3 օրվա ապրուստ ա ընդամենը, մենակ ձմեռվա նույնիսկ գազին չի հերիքում, ուղղակի մտցնեն էն կետը, որ նպաստառուն իրավունք ունի գրանցված աշխատելու»:

Երևան, ընտանեկան նպաստ

Հատկանշական է, որ քննարկման մասնակիցները վկայակոչել են նաև միջազգային փորձը՝ եթե որևէ նպաստառու գրանցված աշխատում է, կարելի է նվազեցնել նպաստը, սակայն չկասեցնել այն, մինչև նա կարողանա ապահովել ընտանիքի նվազագույն պահանջները:

«Իմ կարծիքով, ոնց ա, որ եթե բանկ ես դիմում, ասում են՝ առնվազն պետք ա 6 ամիս աշխատած լինես, ստաբիլ եկամուտ ցույց տաս, նոր, ինձ թվում ա՝ նաև էդ օրենքը պետք ա գործի, որ մարդը ցույց տա, որ ինքը 6 ամիս ստաբիլ

աշխատավարձ ա ստացել, նոր հանեն նպաստը»:

Երևան, սոցիալական նպաստ

Խնդիր 8. - Մասնակիցները լսել են, որ նախկինում տեսուչների հետ կապված որոշակի ապօրինությունների դեպքեր են եղել:

Լուծում - Համակարգում կամ, գուցե, դրանից դուրս պետք է գործի վերահսկողական գործառույթներով մի կառույց, որը տեսուչի որոշումից անկախ կվերահսկի՝ ով պետք իրականում նպաստ ստանա, իսկ ով՝ ոչ: Այլ կերպ ասած, կարևոր է որևէ երրորդ կողմը՝ անկախ մարմնի առկայությունը, որը կվերահսկի սոցիալական ծառայությունների աշխատանքը: Անհրաժեշտ են նաև նպաստառուների՝ իրենց սեփական իրավունքներին տեղեկացվածությունը բարձրացնելուն ուղղված միջոցառուներ, որպեսզի նրանք ամբողջությամբ կախվածության մեջ չլինեն տեսուչներից:

Խնդիր 9. - Տարածված է նաև տեսուչների կողմից հարևաններից, ծանոթ-բարեկամներից հետաքրքրվելու տարբերակը, թե արդյոք աշխատում են տվյալ ընտանիքի անդամները: Մասնակիցները կոնկրետ դեպք են մատնանշում, որ հարևանները տեսուչին ասել են ընտանիքի անդամներից մեկի աշխատելու մասին, սակայն հետագայում պարզվել է, որ վերջինն ընդամենը փորձաշրջան էր անցնում և հետևաբար գրանցված աշխատող չէ:

Լուծում - Այստեղ նորից առնչվում ենք տեսուչների աշխատանքի վերահսկողության և նպաստառուների տվյալների բազաների պարբերաբար թարմացման խնդրին:

Խնդիր 10. - Նպաստառուներներն էլ երբեմն դիմում են ապօրինությունների, օրինակ՝ գնում են գույք և ուրիշի անունով գրանցում:

Լուծում - Վերահսկողության մակարդակի բարձրացում, յուրաքանչյուր ընտանիք պետք է առանձին դիտարկվի՝ իր ունեցվածքով հանդերձ:

Խնդիր 11. - Մասնակիցները խոսում են նաև նպաստների արդար բաշխման խնդրի մասին՝ պետք է ստանան նրանք, ովքեր, իրոք, դրա կարիքն ունեն:

«Իմ կարծիքով՝ ստանա էն մարդը, ով խիստ կարիքն ունի, որովհետև հիմա ստանում են այնպիսի մարդիկ, որ բնավ կարիքը չունեն»:

Երևան, ընտանեկան նպաստ

Այս առումով խնդիրն այն է, որ, օրինակ, ըստ չափանիշների կան ընտանիքներ, որոնցում երեխաներն արդեն չափահաս են և դրանով պայմանավորված կասեցվում է նպաստ ստանալը, բայց կան այնպիսիք, որոնք դրսից եկամուտներ ունեն, բայց դրանք թաքցնելով շարունակում են նպաստ ստանալ: Մասնակիցները նշում են, որ նպաստառուների մեջ կան ընտանիքներ, որոնք իրոք գումարի խիստ կարիք ունեն, կան այնպիսիք, որոնք շարունակում են մնալ նպաստառու որոշակի արտոնություններից օգտվելու համար: Եվ այս հարցում առավել հետևողական պետք է լինեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Շատ ընտանիքներում կան արտագնա աշխատանքի մեկնած քաղաքացիներ և քանի որ նրանց աշխատանքը գրանցված չի, այդ ընտանիքները շարունակում են նպաստ ստանալ: Կան դեպքեր, երբ բացահայտվում է ընտանիքում արտագնա աշխատողի առկայության մասին և այդ փաստով կասեցվում նպաստ ստանալը, որպես կանոն, այդ ընտանիքների անդամները նախաձեռնում են բողոքարկման գործընթաց: Կան նաև դեպքեր, երբ տանը գրանցված աշխատող կա, ով տվյալ ընտանիքի հոգսերը չի կիսում, բայց այդ փաստն, ինքնին անտեսվում է, և ընտանիքը զրկվում է նպաստ

ստանալու հնարավորությունից:

Լուծում – Անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել: Յուրաքանչյուր դեպք պետք է առանձին դիտարկվի, և արդյունքում համակարգն ավելի արդար կլինի, և իրապես կարիքավորները կստանան նպաստ: Այդ նպատակով անհրաժեշտ է խիստ վերահսկողություն իրականացնել, պարբերաբար տնայցեր կազմակերպվել, որովհետև մարդիկ թաքցնում են իրական եկամուտները, ցածր աշխատավարձ են ցույց տալիս: Մասնակիցները կարծում են, որ արդարացի բաշխման համար պետք է հարցումներ կազմակերպել՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպք ուսումնասիրելու համար:

Խնդիր 12. - Մասնակիցները բարձրաձայնել են նաև սոցիալական աջակցության բաժինների որոշ աշխատակիցների անբարեխիղճ լինելու մասին: Նրանք հաճախ օգտվում են դիմացինի խեղճ և անիրազեկ լինելուց, արհեստական քաշքշուկների մեջ են դնում ու ոչ պատշաճ վերաբերմունքի արժանացնում:

Լուծում - Անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը, այդ առումով պետք է ներդրվեն արդյունավետ գործող մեխանիզմներ, իսկ համակարգում աշխատող ոչ բարեխիղճ ծառայողները փոխվեն:

Խնդիր 13. - Նպաստն ապամոտիվացնում է աշխատել:

«Իմ համար գումարի չափ ավելացնելն ամենասխալ տարբերակներից մեկն է, որովհետև էդ դեպքում ամբողջ սեփական պատասխանատվությունը թողնում ենք ուրիշի վրա, ավելի շատ, եթե հնարավորություն լիներ, նրանց ուղղորդելու ինչ որ աշխատանքի, եթե կա աշխատանքի տեղ, առաջինը լինի նպաստառուներին կամ ինչ որ վերապատրաստումներ իրանք ստանան, բայց ոչ երբեք գումարի չափը ավելացնեն, որ սեփական աշխատանքի միջոցով էդ գումարը վաստակեն, ոչ թե սովոր լինեն, որ իրենց միշտ տալու են»:

Մասնակիցները կարծում են, որ համակարգը պետք է հնարավորություն տա մարդկանց աշխատելու, նրանց կայուն աշխատանք ունենալու մոտիվացիան պետք է մեծացնի:

Լուծում - Զբաղվածության պետական գործակալությունը և Աշխատանքի տեղավորման կառույցներն ավելի թիրախավորված պետք է զբաղվեն նպաստառու ընտանիքների անդամների աշխատանքի տեղավորման հարցերով: Ցանկալի է, որ այդ կենտրոնները ունենան դասընթացներ կազմակերպելու և մարդկանց վերապրոֆիլավորման խնդիրները լուծելու հնարավորություն: Միաժամանակ անհրաժեշտ է նպաստառուներին ըստ իրենց որակավորման, հմտությունների և սոցիալական վիճակի, տարբերակված մոտեցում ցուցաբերելը: Նպաստառուները կարևորագույն դրական փոփոխությունների շարքում տեսնում են նախևառաջ կայուն աշխատատեղերի բացումը, որը հնարավորություն կտա տարբեր տարիքային, կրթական ցենզ ունեցող քաղաքացիներին իրենց զբաղվածության խնդիրը լուծել: Սրան զուգահեռ աշխատաշուկայում հատուկ առաջարկներ պետք է լինեն միայն անչափահաս երեխաներ խնամող մայրերի, հաշմանդամություն ունեցող խմբերի համար՝ առավել թեթև գրաֆիկով աշխատանք ապահովելու տեսանկյունից:

Վերահսկողություն իրականացնող մարմինների աշխատակազմերը պետք է մեծացնել, որպեսզի տնայցների ինտենսիվությունը մեծանա: Դրանց արդյունքում վերհանվի, օրինակ, թե **ինչու չեն աշխատում կոնկրետ ընտանիքի չափահաս անդամները:**

Խնդիր 14. - Բարդացված ընթացակարգ է սահմանված ուսման զեղչերի

տրամադրման հարցում: Մասնակիցները կոնկրետ դեպք են ներկայացրել, որ նպաստառուն՝ միայնակ մայր, հստակ իմանալով զեղչի մասին, դիմել է բուհ, սակայն հետագայում պարզվել է՝ որևէ արտոնություն չունի:

Լուծում - Անհրաժեշտ է սահմանել ուսման զեղչերի տրամադրման առավել դյուրին և կենսունակ մեխանիզմներ և հնարավորության դեպքում ավելացնել դրանց չափը: Մասնակիցներն առաջարկում են, որ նպաստառուների համար կազմակերպվի վերապատրաստում, որ հնարավորություն տրվի նոր որակավորում կամ գոնե անվճար կրթություն ստանալ, որ նրանք կարողանան հետագայում աշխատել:

«Գոնե անվճար կրթություն ստանան, բայց հնարավոր չի... ես նույնիսկ դիմել եմ, բայց անօգուտ, ես տարել եմ թուղթ ինստիտուտից, նաև սովորում եմ, տարա, ասեցին առաջին տարին ամբողջությամբ պետք ա վարձը վճարեք, երկրորդ տարին պետք ա դիմում գրեք, արդեն 30% զեղչ, գրեցի դիմումը ուղարկեցի, սպասում եմ պատասխանին, ասում են՝ դու պետք ա ոչ թե սեպտեմբերին գրեիր, այլ հունվարին գրեիր, այսինքն՝ հեչ եղավ իմ էս ամեն ինչը, ինձ նույնիսկ չհասավ»:

Երևան, ընտանեկան նպաստ

Խնդիր 15. – Մասնակիցները նշում են, որ նպաստի գումարը շատ փոքր է և ոչինչ չես կարող դրանով անել: Ամբողջ գումարը գնում է կոմունալ վճարների վրա, նույնիսկ քաղցրավենիքի գումար չի մնում:

Լուծում - Մասնակիցները գտնում են, որ պետք է վերանայել չափանիշները և դրանց հիման վրա կոնկրետ գործակցով ավելացնել նպաստի չափը:

Խնդիր 16. - Մասնակիցները, մասնավորապես, օրինակ են բերում՝ դիցուք տանը մեկը աշխատում է, բայց ընտանիքում ապրում են 10 անդամներ: Աշխատողի

աշխատավարձով կարող են ընտանիքի միայն երեք անդամների կեցության խնդիրները լուծել, իսկ մյուսները ի՞նչ պետք է անեն:

Լուծում - Անհրաժեշտ է հաշվարկել ընտանիքի անդամների թվի ու եկամտի հարաբերակցությունը և հասկանալ, թե արդյոք այդ գումարով կարող է տվյալ ընտանիքն ապահովել ապրելու նվազագույն զամբյուղը: Եթե տանը մեկն աշխատում է, իր եկամուտը կարելի է առանձնացնել ընդհանուրից և այդ մասով նպաստը կրճատել, սակայն ընտանիքին նպաստից չզրկել: Անհրաժեշտ է, որ հաշվարկվի, թե այդ գումարով ընտանիքի քանի անդամների կարիքներ կբավարարվեն: Ինչպես նաև, ամեն տարիքային խմբի համար միջին գումար առանձացնել, որ իրեն անհրաժեշտ է ծախսել և հաշվարկը հենց այդ հիմքով իրականացնել: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում:

Խնդիր 17. - Եթե ընտանիքում տարբեր տարիքային խմբերի երեխաներ կան և նրանցից մեկը չափահաս է դառնում ու աշխատում, ապա այս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ նա աշխատում է նախևառաջ իր կարիքները հոգալու համար: Տվյալ դեպքում նրա օժանդակությունը ընտանիքին, կարող է շատ չնչին լինել և տեղին չէ այս դեպքում ընտանիքին նպաստից զրկելը:

Լուծում - Ընտանիքի չափահաս անդամի աշխատելը միանգամից չպետք է ազդի նպաստի վրա, քանի որ մյուս երեխաներն այդ գումարի կարիքը դեռ ունեն: Կարելի է նաև ընտանեկան նպաստի կայուն չափանիշ դարձնել ընտանիքում երեխաների թիվը:

«Կուզեմ էս նպաստը սարքեն էրեխու փող, այսինքն՝ էրեխեքի թվով փող տան ու չունենա էն նույն բնութագրումը, ինչ որ հիմա: Էդ ժամանակ արդեն մարդիկ հնարավորություն կունենան... դե էդ ընտանիքների մեծ մասը հիմա ստանում ա որովհետև անչափահաս երեխեք կա տանը, ու էդ ընտանիքում չի լինում մեկը, ով

աշխատի, բայց որ արդեն սարքեն երեխեքի փող, յուրաքանչյուր էրեխու համար հատկացնեն սահմանային նորմը օրենքով, մարդիկ էլ կարան աշխատեն, էդ նպաստը էրեխեքինը կլինի, էլ իրանց կարիքների բավարարմանը չեն ուղղի, ու նաև տնտեսական զարգացում կլինի էդ ժամանակ, որովհետև ոնց էլ չլինի մարդիկ կմոտիվացվեն աշխատելու մեջ ու իրանք նաև կմոտիվացվեն կրթության համար, իսկ հիմա ամեն երրորդ մարդ կմտածի երեխա կունենամ, նպաստ կստանամ»:

Գյումրի, ընտանեկան նպաստ

Այսինքն, բազմազավակ ընտանիքների դեպքում թոշակներին կցեն հատկացվող գումարը ու այն տրամադրեն՝ անկախ նրանց աշխատելու կամ գույք ունենալու հանգամանքից: Անհրաժեշտ է, որ սահմանված գումարը լինի ամեն երեխայի հաշվով: Պետք է վերանայել, առհասարակ նպաստ հասկացությունը: Կարելի է սահմանել թոշակ, որ տարբեր գործոններ չազդեն այդ գումարի վրա: Այս փոփոխության արդյունքում նպաստառուների համար հոգեբանական խնդիրն էլ կհաղթահարվի:

Խնդիր 18. - Նպաստառուի չաշխատելու ու գումար չունենալու հոգեբանությունը երեխայի վրա էլ է ազդում, որ իրենք նպաստառու են, չեն կարող և չեն ձգտում աշխատել:

«Օրինակ, իմ տղաները սպորտ շատ էին սիրում, բայց գումար չկար, լող, բայց որ գումար չկար չէի կարողանում, ստիպված տարա բոքսի, որովհետև բոքսը անվճար էր, ձյուդո, բան, սաղ անվճար ա»:

Գյումրի, ընտանեկան նպաստ

Լուծում - Եթե դեռահաս երեխաները ուզում են հաճախել որևէ մարզական և

արվեստի խմբակներ, կարևոր է, որ դրանք անվճար լինեն: Այստեղ կարևոր է, որ երեխան չընկճվի այն գաղափարից, որ իր ընտանիքը նպաստառու է և անհրաժեշտ գումար չունեն նրան իր սիրելի մարզաձևով զբաղվելու հնարավություն տալու համար:

Խնդիր 19. - Նպաստից կտրելու կամ չկտրելու որոշումը բոլորի համար հավասարապես է կայացվում:

Լուծում - Առաջարկվել է հաշվի առնել ընտանիքի անդամի աշխատավարձի չափը, ինչպես նաև՝ թե ընտանիքի որ անդամն է աշխատում: Օրինակ, երբ երիտասարդ աղջիկներն են աշխատում անհրաժեշտ է հաշվի առնել, որ նրանք ամուսնանում ու լքում են իրենց հայրական տունը, կամ երբ ուսանողներ են և մայրաքաղաքում վարձով են ապրում:

Խնդիր 20. - Մասնակիցներն առանձնահատուկ նշել են նաև դժվարացված փաստաթղթաշրջանառության հարցը:

Լուծում - Եթե քաղաքացին աշխատանքի է անցնում, միևնույնն է էլեկտրոնային երևում է նրա աշխատանքի գրանցված լինելը, այդ դեպքում ինչու՞ է առաջանում գործատուից տեղեկանք բերելու անհրաժեշտությունը: Եթե աշխատավարձի չափը չի երևում, ապա կարելի է ավելացնել նաև այդ պահանջը և նպաստառուին կմնա ընդամենը փաստաթուղթը ստորագրելու պարտականությունը:

Խնդիր 21. - Նույնիսկ կարճաժամկետ աշխատանքի անցնելու պարագայում, փաստաթղթեր բերելու անհրաժեշտություն է առաջանում և որոշ դեպքերում այդ մարդիկ գերադասում են չաշխատելը:

Լուծում - Էապես թեթևացնել փաստաթղթաշրջանառությունը:

Խնդիր 22. - Գործատուից կախվածության խնդիր է առաջանում, քանի որ նա է դառնում որոշում կայացնողը.մի դեպքում նա կարող է նախընտրել գրանցել աշխատողին, ինչի պատճառով նպաստառու ընտանիքը կարող է զրկվել նպաստից, մյուս դեպքում՝ կարող է որոշել ցածր աշխատավարձով գրանցել՝ ընդառաջ գնալով այդ ընտանիքներին:

Լուծում – Անհրաժեշտ է օրենսդրական կարգավորում, որ այս խնդիրը գործատուի պատասխանատվության շրջանակից դուրս գա:

Գործատուների հետ անցկացված խորին հարցազրույցների արդյունքների վերլուծություն

Նպաստառուների աշխատանքի հետ կապված խնդիրներն անմիջականորեն առնչվում են գործատուների հետ: Ինչպես վերը նշվեց, նպաստառուները շատ դեպքերում կանգնում են՝ աշխատելու կամ նպաստ ստանալու երկընտրանքի առաջ: Ընդ որում՝ աշխատելու դեպքում էլ նպաստից չզրկվելու համար նախընտրում են ստվերում աշխատելու տարբերակը: Գործատուներն իրենց հերթին նույնպես կանգնում են երկընտրանքի առաջ՝ գրանցել նպաստառուներին, թե չգրանցել: Գրանցելով, ըստ էության, նպաստառուն կարող է զրկվել նպաստից, իսկ չգրանցելու պարագայում պետք է ամբողջությամբ իր վրա վերցնի դրանից բխող բոլոր հետևանքները (փաստացի, աշխատողին չգրանցելը օրենքի խախտում է, որն առաջացնում է վարչական պատասխանատվություն և ֆինասական տույժեր):

Հետազոտության շրջանակներում Երևանում և Գյումրիում գործատուներն ընտրվել են տարբեր ոլորտներից՝ փաստաբանական, հաշվապահական կազմակերպություններ, արտադրության և սպասարկման ոլորտ: Չնայած ոլորտային բազմազանությանը, գործատուների մոտ նպաստառուների հետ կապված

խնդիրները հիմնականում ընդհանրական են:

Գործատուների մասնակցությամբ հարցազրույցների ընթացքում հիմնականում քննարկվել են հետևյալ հարցերը՝ աշխատանքի ընդունելու գործոններ, աշխատողներին գրանցելու/չգրանցելու խնդիրներ, և աշխատանքի առումով նպաստների համակարգի հնարավոր փոփոխություններ:

Աշխատանքի ընդունելու գործոնները, մասնավորապես, հետաքրքրել են նպաստառու լինելու տեսանկյունից. արդյոք գործատուները կարևորում են դիմողի ընտանիքի սոցիալական վիճակը և, եթե այո, ապա ինչ վերաբերմունք ունեն նրանց հանդեպ: Այսպես, աշխատանքի ընդունելիս հիմնականում ուշադրություն դարձնում են մասնագիտական հմտությունների և անհատական որակների վրա, որոնց մեջ կարևորվել են պատասխանատվությունը, կարգապահությունը, հաղորդակցման հմտությունները, աճելու ցանկությունն ու մոտիվացիան և այլն: Իսկ դիմողների ընտանիքների ապահով/անապահով լինելու փաստը նրանց հիմնականում չի հետաքրքրում: Բայցևայնպես նշել են, որ այլ հավասար պայմաններում, եթե երկու դիմողներից մեկը սոցիալական ավելի ծանր վիճակում գտնվի, քան մյուսը, ապա նախընտրությունը համեմատաբար անապահովին կտան՝ այս կերպ փորձելով օգնել նաև այդ ընտանիքին: Այս համատեքստում բոլոր գործատուներն էլ երբևէ ունեցել են նպաստ ստացող աշխատակիցներ և նրանցից շատերը հիմնականում գործել են ի օգուտ նպաստառու աշխատողների՝ չեն գրանցել, որպեսզի նրանց ընտանիքները նպաստից չզրկվեն: Պետք է նաև նշել, որ չգրանցելու նախաձեռնությունը հիմնականում նպաստառու աշխատողների կողմից է լինում, այսինքն, նրանք գործատուին խնդրում են, որպեսզի ընդառաջի և չգրանցի իրենց: Գործատուները կարծում են, որ նպաստների համակարգը, առհասարակ, պետք է վերափոխվի և աշխատունակ մարդկանց նպաստ չտրամադրվի: Սակայն նման դեպքերում նշում են, որ իրենց կողմից անմարդկային քայլ կլինի, եթե մերժեն աշխատողին և

գրանցեն կամ էլ այդ պատճառով աշխատանքի չընդունեն: **Քանի դեռ համակարգում փոփոխություններ չեն կատարվել, նրանք ձգտում են իրավիճակային լուծումներ գտնել**: Այսինքն, իրավիճակին ավելի շատ նպաստառուի շահերի տեսանկյունից են նայում, եթե, դա որևէ լուրջ կամ մեծ վնաս չի հասցնի իրենց կազմակերպությանը կամ բիզնեսին՝ իրենց վրա վերցնելով փաստացի չգրանցված աշխատող ունենալու բոլոր ռիսկերն ու հետևանքները: Չգրանցելուց զատ, նպաստառու աշխատակից պահելու ևս մի տարբերակ է հանդիպել: Գործատուները գրանցում են նպաստառու աշխատողին նվազագույն աշխատավարձով, որպեսզի նպաստ ստանալու գործակցի վրա չազդի այդ եկամուտը: Աշխատավարձի մյուս մասն էլ ավելացնում են այլ գրանցված աշխատողների աշխատավարձին: Աշխատավարձի փոխանցումից հետո գումարի մնացած մասը կանխիկացվում է և նպաստ ստացող աշխատակցի մասը տրվում է իրեն: Փաստացի, այսպես վարվելը կազմակերպությանը որևէ վնաս չի հասցնում, քանի որ փաստաթղթային առումով ամեն ինչ մաքուր է, և գործատուն այս կերպ փորձում է պահել աշխատողին և աջակցել նրան: Գործատուները նաև շեշտում են, որ դիմում են այդ քայլին, քանի որ աշխատավարձերն էլ այդքան բարձր չեն: Այդ եկամտի և նպաստի գումարով ընտանիքը փորձում է հոգալ իր հիմնական կարիքները: Այդուհանդերձ, լինում են դեպքեր, երբ նույնիսկ բավականին բարձր աշխատավարձի դեպքում էլ աշխատողը չի ցանկանում հրաժարվել նպաստից՝ այն համարելով կայուն եկամուտ:

Ստորև ներկայացված են մի շարք մեջբերումներ, որտեղ գործատուները պատմում են իրենց՝ նպաստառու աշխատողներ ունենալու փորձառության մասին: Նախ տեսնում ենք, որ լինում են դեպքեր, երբ նպաստառուները նախընտրում են նպաստ ստանալ և չաշխատել: Նման դեպքերը հիշատակել էին նաև սոցիալական ոլորտի ներկայացուցիչները՝ նպաստառու ընտանիք-զբաղվածություն առնչությունների

քննարկման համատեքստում՝ երբ սառը հաշվարկի արդյունքում ավելի «ձեռք է տալիս» նպաստ ստանալը: Այդ է պատճառը, որ նպաստառուները մերժում են զբաղվածության գործակալությունների կողմից առաջարկված աշխատանքները:

«Համագործակցում ենք զբաղվածության կենտրոնի հետ, որտեղ բազմաթիվ խնդիրներ են առաջ գալիս: Օրինակ, մեզ պետք էր հացթուխ գտնել, իրենք ուղորդում էին մարդուն, էդ մարդը գալիս էր, ասում էր ինչ կլինի, խնդրում եմ, ինձ մի ընդունեք աշխատանքի, ես գնամ ասեմ, որ համապատասխան չեմ, որ նպաստից չկտրվեմ: Էդքանով տեղյակ եմ, որ մարդիկ ավելի շատ կողմ են նպաստին, քան թե գան աշխատեն, իրենց աշխատավարձը ստանան, մտածում են, ասում են ավելի լավ է տանը մնանք, էդ նպաստը ստանանք»:

Բարեգործական կազմակերպություն, Գյումրի

Երբեմն, գործատուները համաձայնում են նպաստառու աշխատողներին չգրանցել կարճ ժամանակով՝ 2-3 ամիս, սակայն ավել ժամկետի դեպքում արդեն վախենում են հնարավոր ստուգումներից և տուգանքներից: Երբ գրանցելու խնդիրն է առաջ գալիս, կրկին, հաշվարկ անելով, նպաստառուները նախընտրում են դուրս գալ աշխատանքից, որպեսզի ընտանիքը չզրկվի նպաստից:

«Էդ խնդիրը բոլոր կազմակերպություններում կլինի, հատկապես Գյումրիում, որովհետև բոլորն էլ ուզում են աշխատել, բայց նպաստից էլ չկտրվել, մեծ գումար չի իհարկե, բայց չեն ցանկանում զրկվել: Եղել է դեպք, որ մեկ ամիս չգրանցեցի աշխատողին, որ նպաստից չզրկվի: Ուսանող էր և աշխատող, ընտանիքը նպաստ էր ստանում, դրա համար չգրանցեցի: Մեկ ամիս հետո արդեն իրեն գրանցեցի, պայմանները իրեն ձեռք չտվեց, մեկ ամիս էլ աշխատեց ու արդեն դուրս եկավ

աշխատանքից: Կարող ա մի ամիս, 2 ամիս էլ երկարացնեի, չգրանցեի իրեն, բայց արդեն շատ երկար կլիներ, չէր թույլատրվի»:

Սպասարկման ոլորտ, Գյումրի

«Իհարկե եղել են դեպքեր… երիտասարդը կարող է գա, ասի սահմանամերձ գյուղի բնակիչ եմ, 20-25 հազար նպաստ ենք հազիվ ստանում, նաև երևա ուսանող եմ, աշխատում եմ… էդ 20 հազարը մեր համար էական ա, ես կզրկվեմ: Կան, որ պահում են նման աշխատողներ, օրինակ խանութներում, բայց մեր գրասենյակում չի լինի»:

Ծառայությունների մատուցման ոլորտ, Երևան

Լինում են դեպքեր, երբ գործատուները կախված են լինում նպաստառու աշխատողից և ստիպված հարմարվում են նրանց պայմաններին: Հատկապես արտադրության ոլորտում գործունեություն ծավալող գործատուները շեշտում են հմուտ, պրոֆեսոնալ արհեստավորների պակասը: Եթե այդ արհեստավորը նաև նպաստ ստացող ընտանիքից է լինում, ապա գործատուին այլ ելք չի մնում, քան նրան չգրանցելը, քանի որ տվյալ արհեստի վարպետները շատ քիչ են և հնարավոր չի լինի նրանց փոխարինել այլ աշխատակցով: Եվ ստացվում է, որ աշխատանքից չեն կարող ազատել, քանի որ այդ մասնագետի կարիքը շատ ունեն, իսկ եթե աշխատողն էլ համաձայն չլինի գրանցմանը, ապա դուրս կգա: Իսկ լավ մասնագետի կորուստն անմիջականորեն անդրադառնում է կազակերպության վրա, և հնարավոր է բիզնեսը ծանր մրցակցությանը, պարզապես, չդիմանա: Այս դեպքում աշխատավարձի չափն էլ կապ չունի, քանի որ նույնիսկ բարձր աշխատավարձի դեպքում էլ կան մարդիկ, ովքեր ձգտում են նպաստ ստանալ: Գործատուներն այս ֆենոմենն ավելի շատ կապում են մտածողության հետ: Ըստ նրանց՝ շատերը մտածում են, որ հնարավոր է՝ երկրում փոփոխություններ լինեն, աշխատանքը

կայուն չլինի, իսկ նպաստը կայուն եկամուտ է, որը երբեք չի խանգարում:

Ի հեճուկս նշված օրինակի՝ շատ ցածր աշխատավարձի դեպքում հնարավոր է լինում և նպաստ ստանալ, և գրանցված աշխատել: Այդ դեպքում գործատուները պետք է աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկանք տրամադրեն: Սակայն, լինում են նաև դեպքեր, որ կես դրույքաչափով աշխատավարձը նպաստից զրկվելու պատճառ է դառնում, ինչի մասին նպաստառուները հետո են իմանում: Աշխատողին պահելու համար գործատուն որոշում է աշխատանքից ազատել և որպես չգրանցված աշխատող պահել նրան: Սակայն այս դեպքում էլ նշում են, որ պետք է ազատման փաստաթուղթ տրամադրել, որն աշխատողը պետք է ներկայացնի սոցիալական աջակցության կենտրոն: Այսպիսով, եթե նպաստառուն որոշում է գրանցված աշխատող լինել, ապա գործատուի կողմից պետք է տեղեկանք տրամադրվի, որը պետք է ներկայացվի համապատասխան մարմիններ: Տեղեկանքը կարող է լինել աշխատավարձի չափի, աշխատանքի ընդունման կամ ազատման մասին: Գործատուների մի մասը նշում է, որ այդ կողմնակի թղթաբանությունն ու վարչարարությունը անիմաստ են և երբեմն խանգարում են բիզնեսին:

«Մեր մոտի հավաքարարը համ գրանցված աշխատող է, համ էլ նպաստ է ստանում: Քիչ աշխատավարձ է ստանում ու դա չի խանգարում, որ նպաստ էլ ստանա, պլյուս 6-7 երեխա ունի, ստանում են նպաստը: Փաստաթղթեր ներկայացրել ենք սոցիալական ծառայությանը: Հավաքարարը տեղեկանք ուզեց, որ էստեղ աշխատում է, ստորագրեցի, ուղարկեցի էդ թուղթը՝ աշխատավարձի չափով... խնդիրներ ուներ նպաստի հետ կապված, թուղթն էլ տարավ, վերջում պարզվեց, որ էստեղի աշխատանքը չի խանգարում, որ նպաստ էլ ստանա»:

Սպասարկման ոլորտ, Գյումրի

«Եղել են, որ ասել են նպաստ ենք ստանում, մի գրանցեք, կես դրույքով կարող ա ուզենանք գրանցենք, նպաստից կզրկվի, հետո գործից ազատելու թուղթ են ուզում մեզնից… մեր բիզնեսին խանգարում ա»:

Ծառայությունների մատուցման ոլորտ, Երևան

Ինչ խոսք, հետհեղափոխական շրջանում գործատուները ձգտում են ստվերից դուրս գալ և փորձում են շարժվել բոլոր աշխատողներին գրանցելու մոտեցմամբ: Գրանցվելու առաջարկներ լինում են նաև հենց նպաստառու աշխատողների կողմից: Սակայն նաև նշում են, որ եթե ներկայում նույնպես նման ընտրության առաջ կանգնեն՝ նպաստառուին գրանցել, թե ոչ, նորից կփորձեն ընդառաջել՝ նրա դրության մեջ մտնելով, միայն եթե դա համատարած բնույթ չկրի:

«Հիմա ես բռնեմ 3 ամսով գրանցեմ, ընտանիքը զրկվի, մի քիչ անմարդկային ա… շատ կան, ամենուրեք տենց են անում, ո՞ր մի գործատուն անմարդկային կլինի»:

Ծառայությունների մատուցման ոլորտ, Երևան

«Մայրիկ էր, երեխաներով, սոցիալապես անապահով ընտանիք էր, ընդունեցինք, սովորեցրինք մեզ մոտ, գրանցեցինք, հիմա մեր լավ աշխատողներից մեկն է»:

Բարեգործական կազմակերպություն, Գյումրի

Նպաստների համակարգին գործատուները ծանոթ են այնքանով, որքանով շփվել են նպաստառու աշխատողների հետ: Նրանք, որպես կանոն, չեն տիրապետում գործակիցների, նպաստի չափերի, նպաստ ստանալու և զրկվելու պայմանների վերաբերյալ տեղեկատվությանը: Սակայն, դրանով հանդերձ, իրենց փորձառությունից ելնելով՝ նրանք նույնպես նշում են համակարգի մի շարք թերի

կողմեր: Մասնավորապես, նրանց կողմից ընդգծվում է այն հանգամանքը, որ նպաստների համակարգը խոչընդոտում է և չի խրախուսում մարդկանց մտնել աշխատաշուկա, քանի որ միշտ նպաստից զրկվելու սպառնալիք կա: Բացի այդ, շատ են նշում, որ նպաստ են ստանում մարդիկ, ովքեր համեմատաբար ավելի բարեկեցիկ պայմաններում են ապրում: Նրանց կողմից առաջ է բերվում ճիշտ թիրախավորման և հասցեականության ապահովման խնդիրը:

«Կա մի հատված, որ ստանում ա նպաստ, բայց ընդհանրապես չի հասնում, փաստաթղթերը կեղծել են, պատրանք են ստեղծել, որ իրենք կարիքավոր են, բնականաբար, ավել գումար ա գալիս, կենցաղային հարցեր ա: Շատ լուրջ պիտի հետևեն շահառուին, որ համ իրենց լավ լինի, բայց պետությունն էլ փայտը ձեռքից չգցի»:

Ծառայությունների մատուցման ոլորտ, Երևան

«Վերահսկողությունն է ամենակարևորը, արդյունավետ չի վերահսկվում, դրա համար յուրաքանչյուր գործատու անում է այն, ինչ իր սրտով է: Մեր հարևանը ստանում է նպաստ ու սոցիալական պայմանները էնքան լավ են, որ նպաստի կարիք չունի, իսկ կան մարդիկ, որ կարիքը ունեն, բայց չեն ստանում: Դրա համար վերահսկողություն է պետք: Օրինակ, հանձնաժողով ստեղծվի, մարզերից սկսեն վերահսկողությունը ու հասնեն Երևան… տեսնեն, արդյոք ստացողին անհրաժեշտ է այդ 20 հազարը, թե մեկ ուրիշը կա, ում ավելի անհրաժեշտ է»:

Սպասարկման ոլորտ, Գյումրի

Առհասարակ, գործատուները գտնում են, որ նպաստ պետք է տրամադրվի ամենակարիքավորներին, որպեսզի կարողանան ոտքի կանգնել և իրենց վիճակը

բարելավել, ինչպես նաև հաշմանդամություն ունեցողներին: Ըստ նրանց՝ նպաստը չի խրախուսում մարդկանց աշխատել, հետևաբար այն չպետք է տրվի աշխատունակ մարդկանց: Նպաստ տալու փոխարեն գործատուներն առաջարկում են ստեղծել համապատասխան միջավայր, որպեսզի քաղաքացին կարողանա աշխատաշուկա մտնել: Իսկ որպեսզի նպաստառուները չվախենան աշխատել և նպաստ ստանալու հանդեպ վերաբերմունքը փոխվի, առաջարկում են աշխատանքի անցնելիս քաղաքացուն նպաստից միանգամից չզրկել: Համակարգի հիմքում անպայմանորեն պետք է լինի ընտանիքի վիճակի կայունացումը: Դրան հասնելու համար գործատուները գտնում են, որ աշխատանքի անցնելուց հետո պետք է թողնել, որ մի քանի ամիս ևս ընտանիքը շարունակի նպաստ ստանալ՝ մինչև ոտքի կանգնելը: Այստեղ նրանք կարևոր են համարում նաև խիստ վերահսկողության սահմանումը, որպեսզի նպաստի կարիք չունեցող ընտանիքները չկարողանան օգտվել այդ հնարավորությունից: Բացի դրանից, առաջարկում են նպաստի չափը համապատասխանեցնել նվազագույն զամբյուղի չափին:

«Հիմա պետությունը ասում ա՝ բոլորդ եղեք անգործ, նոր ես ձեզ նպաստը տամ: Հիմա լավ չի՞՝ 5 հոգուց 4-ը անգործ են, մեկը փորձում ա էդ վիճակից դուրս գա: Պետությունը պիտի սահմանի մի վիճակ, որ դու սկսեցիր աշխատել, մոտակա մի 3-4 ամիսը քեզ թույլ ենք տալիս ստանաս նպաստ, ոտքի կանգնես, … թող աշխատի, մինչև զրկես, նորից վերականգնես, անիմաստ վարչարարություն ա»:

Ծառայությունների մատուցման ոլորտ, Երևան

«Եթե որևէ մեկը անցնում ա աշխատանքի, ժամանակ տան, սոցիալական վիճակը տեսնեն բարելավվեց, թե ոչ: 50 հազար աշխատավարձ ա ստանում, 5 հոգանոց ընտանիք, նպաստն էլ 20 հազարը, ե՞րբ ա 70 հազարը 5 անձից բաղկացած

ընտանիքին բավարարել: Պիտի վերլուծեն, հասկանան: Եթե մեկը դիպլոմ ստացավ, 200-300 հազար դրամ աշխատավարձ ստացավ, լավ, յոլա կգնա ընտանիքը: Շեմ պիտի սահմանեն, որ աշխատավարձն ու նպաստը իրար հետ եթե բաժանենք ընտանիքի անդամների քանակին, եթե նվազագույն զամբյուղը չի գերազանցում, չզրկեն նպաստից»:

Ծառայությունների մատուցման ոլորտ, Երևան

Համակարգային փոփոխությունները, ինչ խոսք, անհրաժեշտ են, սակայն գործատուները գործող համակարգի պայմաններում էլ իրենց կազմակերպություններում աշխատանք են տանում, որպեսզի փոխեն աշխատողների մտածելակերպն ու նրանց համոզեն գրանցել:

«Մեր կողմից քայլը էն ա, որ անընդհատ ամոթանք տանք, չի կարելի՝ եթե կարիքը չունես, նպաստ ստանալը ճիշտ չէ: Ես ինքս շատ եմ տանում էդ աշխատանքը, խոսում հետները, ամոթանք տալով: Պատկերացրեք մի 3-4 աշխատող համաձայնել են գրանցվել»:

Արտադրության ոլորտ, Երևան

Եզրակացություն

Հետազոտությունը, ընդհանուր առմամբ, անդրադառնում է նպաստառու-աշխատաշուկա փոխառնչություններին՝ վերլուծելով, թե տարբեր խմբեր՝ սոցիալական ոլորտի ներկայացուցիչները, ոլորտի փորձագետները, գործատուները և նպաստառու ընտանիքների անդամները ինչ խնդիրներ են տեսնում վերջինների՝ աշխատաշուկայում ընդգրկվելու և, առհասարակ, նպաստների գործող համակարգի հետ կապված, և ինչ պետք է անել համակարգի բարելավման ուղղությամբ: Հետազոտության տվյալների վերլուծության արդյունքում կատարավել են հետևյալ եզրակացությունները:

Սոցիալական ոլորտի ներկայացուցիչներ, ոլորտի փորձագետներ

- Ըստ սոցիալական ոլորտի ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների՝ նպաստառուները մեծամասամբ տեղյակ են նպաստների համակարգին, իրենց իրավունքներին և պարտականություններին, հասանելի անվճար ծառայություններին և արտոնություններին: Նրանք ենթադրաբար տեղեկացված են, քանի որ երկար տարիներ ընդգրկված են նպաստների համակարգում, որում հաշվառվելուց սոցիալական ոլորտի ներկայացուցիչ-ները (սոցիալական աջակցության տարածքային բաժին) նրանց ներկայացնում են անհրաժեշտ տեղեկություններ, նպաստառուները փաստաթուղթ են ստորագրում, որտեղ կրկին զետեղված է ամբողջ տեղե-կատվությունը: Բացի այդ, նպաստների համակարգի վերաբերյալ համապար-փակ տեղեկատվություն է շրջանառվում էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներում, սոցիալական մեդիայում և ավանդական ԶԼՄ-ներում:
- Բայցևայնպես կան քաղաքացիներ, ովքեր հիմնականում անիրազեկ են:

Դրանով պայմանավորված նրանք մի շարք խնդիրների առաջ են կանգնում: Սակայն, հարկ է փաստել, որ տեղեկացվածության հիմնական բացն առավելապես նպաստառուների պարտականությունների տիրույթում է: Նրանք կամ լուրջ չեն վերաբերում իրենց պարտականություններին, կամ էլ ձեռնտու չէ դրանց կատարումը, քանի որ այդ դեպքում կմեծանա նպաստից զրկվելու հավանականությունը:

- Եթե նպաստառուն անցնում է աշխատանքի մինչև մեկ ամիս ժամկետով, ապա նա նպաստից չի զրկվում՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկանք աշխատանքի վայրից: Մեկ ամսից ավել աշխատելու պարագայում, եթե աշխատավարձի չափն ազդում է նպաստի գործակցի վրա, ապա նպաստառուն զրկվում է նպաստից: Նպաստը վերականգնելու համար նա պետք է աշխատանքից ազատման տեղեկանք ներկայացնի, ինչից հետո, մեկ ամսվա ընթացքում նպաստը վերականգնվում է:

  Նշված ընթացակարգը հնարավոր է ձգձգվի ինչպես նպաստառուների, ովքեր հետամուտ չեն լինում իրենց պարտականությունների կատարմանը, այնպես էլ գործատուների պատճառով՝ ովքեր կրկին ուշադիր չեն լինում ժամկետներին կամ ֆորմալ տեսանկյունից չեն կարողանում տեղեկանքը ժամանակին տրամադրել: Պարտականություններն անտեսելը կարող է հետգանձումների պատճառ դառնալ, ինչը ծանր բեռ է դառնում նպաստառու ընտանիքների համար:

- Որոշ դեպքերում, նպաստառուները նախընտրում են չգրանցված աշխատելու տարբերակը, որպեսզի նպաստից չզրկվեն, միաժամանակ նաև աշխատավարձ ստանան: Իսկ եթե կանգնում են կայուն նպաստ, թե անկայուն աշխատավարձ ստանալու երկընտրանքի առաջ, ապա, որպես կանոն, նախընտրում են նպաստ ստանալու տարբերակը, նաև անվճար

ծառայություններից և արտոնություններից օգտվելու համար:

- Ըստ սոցիալական ոլորտի ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների՝ նպաստների համակարգն իրականում պասիվ համակարգ է, որը չի խրախուսում աշխատելը: Միաժամանակ, նրանք գտնում են, որ այն բավականաչափ ճկուն և արդյունավետ չէ, քանի որ հնարավորություն չի տալիս գնահատել կարիքները և օգնություն տրամադրել ըստ գնահատված կարիքի: Այս խնդրի լուծումն ուղղակիորեն կապված է սոցիալական ոլորտի աշխատակիցների գործառութային որոշակի սահմանափուկումների հետ: Նրանք ավելի շատ ինքնուրույնություն և ազատություն պետք է ունենան որոշումներ կայացնելու հարցերում:
- Սոցիալական ոլորտի ներկայացուցիչների աշխատանքն ավելի արդյունավետ կդառնա, եթե զբաղվածության գործակալությունների ու սոցիալական աջակցության տարածքային բաժինների միջև համագործակցությունն առավել նպատակային և ինտենսիվ լինի, այս դեպքում կենտրոնի աշխատակիցը նպաստ նշանակելուց զատ, կկարողանա նաև այլ ծառայություններ առաջարկել նպաստառուներին, մասնավորապես աշխատաշուկայում ճիշտ կողմնորոշվելու առումով:
- Ըստ հետազոտության տվյալների՝ կենսաթոշակն ավելի դրական է ազդում աղքատության հաղթահարմանը, քան նպաստը: Հետևաբար, եթե նպաստների միջոցներն էլ վերաբաշխվեն և տրվեն, օրինակ, միայն երեխաներին, ապա այն ավելի արդյունավետ կլինի և կծառայի նպատակին: Սա նաև կնպաստի, որ մարդիկ չխուսափեն աշխատելուց, ինչն իր հերթին կբերի մտածողության փոփոխությանը: Նպաստների համակարգը պետք է դարձնել առավել նպատակային և թիրախավորված: Միանշանակ է, որ նպաստառու պետք է լինի կարիքավոր անձը, և ոչ ընտանիքը:

Նպաստառու ընտանիքների անդամներ

- Նպաստների համակարգին իրազեկվածությունը երիտասարդների շրջանում ավելի քիչ է, քան մեծահասակ նպաստառուների դեպքում՝ հատկապես նպաստների համակարգում հաշվառվելու, փաստաթղթերի ներկայացման հարցերում:
- Անհրաժեշտ փաստաթղթերի հավաքման գործընթացը, թեպետ, այնքան էլ երկար չի տևում, սակայն մասնակիցների գնահատմամբ՝ արհեստականորեն բարդացված է, հարկավոր է ստեղծել ավելի պարզ, միասնական համակարգ՝ գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար:
- Նպաստառուներին տրամադրվող արտոնություններն ավելի են կարևորվում, քան տրամադրվող գումարը, և շատ դեպքերում նպաստառուները կնախընտրեին զրկվել նպաստի գումարից, սակայն ոչ երբեք արտոնություններից:
- Երիտասարդ նպաստառուների շրջանում առավել առանցքային է այն գաղափարը, ըստ որի, ողջ կյանքում չես կարող ապրել նպաստառուի հոգեբանությամբ և անհրաժեշտ է աշխատել՝ անգամ նպաստից զրկվելու գնով:
- Վերահսկողության պակասի խնդիրը նույնպես ակտուալ է: Դրա անհրաժեշտությունը կարող է առաջանալ ամենատարբեր հարցերում՝ նպաստառուներին արտոնությունների չտրամադրում, ոչ պատշաճ իրազեկում, որոշ դեպքերում տեսուչների ոչ բարեխիղճ աշխատանք և այլն:
- Չգրանցված աշխատելը կամ աշխատանքից, առհասարակ, խուսափելը տարածված երևույթ է նպաստառուների շրջանում՝ գրանցված աշխատելու պարագայում նպաստից զրկվելու խնդրով պայմանավորված:
- Առկա է սեփական իրավունքների մասին տեղեկացվածության պակաս

նպաստառուների շրջանում, ինչի հաղթահարմանն ուղղված մի շարք նպատակային գործողություններ պետք է իրականացնել, ինչպես նաև արդյունավետ մեխանիզմներ ներդնել:

Գործատուներ

- Նպաստառուների հետ աշխատանքային փոխհարաբերություններում գործատուները, որպես կանոն, կանգնում են հետևյալ երկընտրանքի առջև՝ գրանցել նրանց և ընտանիքին զրկել նպաստ ստանալու հնարավորությունից, թե չգրանցել և դրանից բխող բոլոր ռիսկերը և հետևանքները վերցնել իրենց վրա:
- Աշխատանքի ընդունելիս գործատուները հաշվի չեն առնում դիմողի ընտանիքի սոցիալական դրությունը, իսկ եթե տեղյակ են լինում՝ այլ հավասար հնարավորությունների առկայության դեպքում, նախընտրում են աջակցել և աշխատանքի ընդունել առավել անապահովներին:
- Նպաստառուներն են հիմնականում դիմում գործատուներին իրենց չգրանցելու առաջարկով՝ ընտանիքին նպաստից զրկելու խնդրի առաջ չկանգնեցնելու համար: Գործատուները, որոշ դեպքերում նախընտրում են ընդառաջել և չգրանցել կամ էլ գրանցում են նվազագույն աշխատավարձով, որպեսզի նպաստ ստանալու գործակցի վրա այդ եկամուտն ազդեցություն չունենա:
- Նպաստառուներից ոմանք նախընտրում են չաշխատել և նպաստ ստանալ: Այդ պատճառով էլ մերժում են զբաղվածության գործակալությունների կողմից առաջարկված աշխատանքի տարբերակները, որպեսզի շարունակեն մնալ նպաստառուի կարգավիճակում:
- Կան դեպքեր, երբ գործատուները կախված են լինում նպաստառու

աշխատողից և ստիպված հարմարվում են նրանց պայմաններին, քանի որ նրանք անփոխարինելի մասնագետներ են: Սա հիմնականում վերաբերում է արհեստավորներին:

- Աշխատանքի ընդունվելու կամ աշխատանքից ազատվելու դեպքում գործատուները համապատասխան տեղեկանք են տրամադրում նպաստառուներին, որպեսզի ներկայացնեն սոցիալական աջակցության կենտրոններ և արձանագրեն համապատասխան փոփոխությունները: Գործատուների տեսանկյունից այս թղթաբանությունը շեղում է իրենց հիմնական աշխատանքից, և որոշ անհարմարություններ պատճառում:
- Գործատուները նույնպես վկայակոչում են նպաստների համակարգի թերի կողմերը: Այն չի խրախուսում մարդկանց աշխատաշուկա մտնելը, այլ դարձնում է նրանց պասիվ և ապամոտիվացված:
- Գործատուները կարծում են, որ նպաստ պետք է տրվի միայն ամենակարիքավորներին և հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին: Իսկ աշխատունակ քաղաքացիներին պետք է մշտապես խրախուսել, որպեսզի աշխատեն:
- Գործատուները նույնպես կարծում են, որ եթե նպաստառու ընտանիքի անդամներից որևէ մեկը աշխատանքի է անցնում, ապա նրա ընտանիքին չպետք է միանգամից զրկել նպաստից: Նման դեպքերում նպաստի տրամադրումը պետք է շարունակել այնքան ժամանակ, մինչ այդ ընտանիքի վիճակը կայունանա: Այս գործընթացը պետք է խիստ վերահսկողության տակ պահվի, որպեսզի առավել ապահովված քաղաքացիները չկարողանան խաբեությունների միջոցով օգտվեն համակարգի ծառայություններից:

Առաջարկներ

Հետազոտության արդյունքների վերլուծությունն ու հիմնական եզրակացությունները հնարավորություն են տվել մի շարք առաջարկներ ներկայացնել.

- Նպաստառուների տեղեկացվածության հարցը բարելավելու համար իրականացնել իրազեկման համակողմանի միջոցառումներ: Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ, որտեղ շեշտը կդրվի նրանց իրավունքների և պարտականությունների բացատրման, ինչպես նաև վերջինի չկատարումից բխող հետևանքների վրա: Բացի այդ, սոցիալական ցանցերում տարածել այդ տեղեկատվությունն ու պարբերաբար նման բովանդակությամբ բուկլետներ բաժանել, հեռուստատեսային նպատակային հաղորդումներ և նպաստներին առնչվող կոնկրետ խնդիրների վերաբերյալ տեղեկատվական հոլովակներ պատրաստել և եթեր հեռարձակել, էլեկտրոնային տեղեկատվական ինտերակտիվ ռեսուրսներ ստեղծել և ակտիվ գործարկել:
- Նպաստը տրամադրել ոչ թե ընտանիքին, այլ անհատին՝ ելնելով կարիքի գնահատումից, ինչը համակարգին ճկունություն կհաղորդի, իսկ աջակցությունն էլ ավելի թիրախավորված կդառնա: Նպաստների արդարացի բաշխումն ապահովելու նպատակով ՏԻՄ-երին կից անկախ փորձագետների խմբեր ձևավորել, ովքեր կգնահատեն յուրաքանչյուր ընտանիքն առանձին՝ հանգամանորեն ուսումնասիրելով վերջինի հնարավորությունները:
- Հաշվարկել ընտանիքի անդամների թվի ու եկամտի հարաբերակցությունը և վերլուծել, թե արդյոք ստացվող նպաստով կարող է տվյալ ընտանիքն ապահովել ապրելու նվազագույն պայմանները: Կարելի է նաև յուրաքանչյուր տարիքային խմբի համար միջինացված գումար սահմանել և հաշվարկն այդ

հիմքով իրականացնել:

- Անչափահասներին տրամադրվող նպաստի պարագայում կայուն գումար սահմանել ամեն երեխայի հաշվով և այդ գումարը տրամադրել որպես թոշակ, որի վրա չեն ազդի այն բոլոր գործոնները, որոնց դեպքում այդ գումարից շահառուները կզրկվեն: Այդ գումարի ստացման տարիքային շեմ սահմանել 20 տարեկանը՝ 18-ի փոխարեն:
- Նպաստի գումարային հատկացումը դարձնել աջակցության ձևերից մեկը, այլ ոչ՝ հիմնականը: Հատկացվող գումարը վերաբաշխել և տրամադրել գնահատված կարիքին համապատասխան, անհրաժեշտության դեպքում մի քանի ամսվանը միաժամանակ, որից հետո վերահսկողություն սահմանել և գնահատել, թե ինչպես է ընտանիքն օգտագործում տրամադրված օգնությունը:
- Նպաստի գումարը տարանջատել հասանելի ծառայություններից և արտոնություններից: Ելնելով կարիքի գնահատումից՝ ընտանիքին տրամադրել միայն այդ ծառայություններն ու արտոնությունները: Այսինքն, նպաստառուների՝ այս կամ այն պատճառով նպաստից զրկվելու պարագայում, չզրկել նրանց նաև տրամադրվող արտոնություններից, օրինակ, ուսման վարձի զեղչերից, կոմունալ վճարների զեղչերից և այլն:
- Եթե նպաստառու ընտանիքի որևէ անդամ գրանցված աշխատանքի է անցնում, ապա այդ ընտանիքին նպաստից միանգամից չզրկել, այլ շարունակել տրամադրել ևս մի քանի ամիս (միջինում 6-12), մինչև ընտանիքի վիճակի կայունացումը:
- Սոցիալական աջակցության տարածքային կենտրոնների աշխատակիցներին ավելի լայն հնարավորություններ տրամադրել: Բացի այդ, կենտրոնների աշխատակիցների համար պարբերաբար դասընթացներ կազմակերպել,

նրանց վերապատրաստել, որպեսզի կարողանան իրենց գործառույթները լիարժեք կատարել: Այս ամենը պետք է ուղեկցվի նաև այդ աշխատակիցների աշխատավարձերի պարբերաբար բարձրացմամբ: Այս կերպ հնարավոր կլինի նաև կոռուպցիոն ռիսկերը վերացնել:

- Առավել նպատակային դարձնել զբաղվածության կենտրոնների և սոցիալական աջակցության տարածքային բաժինների համագործակցությունը: Վերանայել զբաղվածության կենտրոնների կողմից կազմակերպվող դասընթացները՝ դրանք դարձնելով ավելի արդիական և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ինչն էլ առավել մրցունակ կդարձնի նպաստառուներին աշխատաշուկայում:
- Շրջանառության մեջ դնել հստակ օրենսդրական կարգավորում, համաձայն որի գործատուի վրա չի ընկնի նպաստառու ընտանիքի անդամին գրանցելու կամ չգրանցելու բարոյական բեռն ու պատասխանատվությունը:
- Նպաստառու ընտանիքին նպաստից զրկել, եթե զբաղվածության գործակալության կողմից առաջարկվող աշխատանքները մերժում է մի քանի անգամ (իհարկե, այստեղ պետք է հաշվի առնել առաջարկվող աշխատանքի բնույթն ու աշխատավարձի չափը):
- Մեծացնել վերահսկողությունը հատկապես այն հարցերում, որոնք առնչվում են նպաստների նշանակման, նպաստառուներին արտոնությունների տրամադրման, պատշաճ իրազեկման և հնարավոր չարաշահումներին վերաբերող խնդիրներին:
- Արտագնա աշխատանքի մեկնած ընտանիքի անդամի ուղարկած գումարի գործոնը, ապառիկ ունենալը հնարավորին չափ չպետք է խոչընդոտեն նպաստ ստանալուն, քանի որ դա հնավորություն է տալիս ընտանիքներին փոքր ինչ կայունանալ:

- Պարզեցնել նպաստ ստանալու համար առկա ընթացիկ փաստաթղթաշրջանառությունը՝ գործընթացը դարձնելով առավել արագ կարգավորվող, և նպաստառուներին զերծ պահել յուրաքանչյուր փաստաթուղթ մի քանի անգամ ներկայացնելու խնդրից:

Վերջաբանի փոխարեն

Նպաստների գործող համակարգը, որի հիմնական նպատակներից են աղքատության նվազեցումը և ընտանիքների կենսամակարդակի բարձրացումը, ըստ էության, շահառուների կյանքի որակի շոշափելի բարելավում չի ապահովում: Ավելին, գործող համակարգը շահառուներին ուղղակի իրենից կախվածության մեջ է դնում: Այն բավականաչափ ճկուն և արդյունավետ չէ և շատ դեպքերում մարդկանց պարզապես կանգնեցնում է հետևյալ երկընտրանքի առջև՝ կայուն նպաստ ստանալ, թե՞ աշխատել: Ցավոք, հաճախ տվյալ երկընտրանքը լուծվում է առաջին տարբերակի օգտին: Սույն հետազոտության արդյունքում արված առաջարկները պրակտիկ քայլեր են, որոնք կարող են էապես բարելավել նպաստների համակարգը՝ դարձնելով այն առավել արդյունավետ և շահառուների համար՝ կայուն աշխատանք ունենալուն միտված:

Սակայն, ներկայացվող առաջարկները, գուցե, անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են նպաստների համակարգի ամբողջական բարեփոխման տեսանկյունից: Այստեղ կարևորը փիլիսոփայության և մոտեցումների փոփոխման հարցն է: Իրականությունն այն է, որ նպաստառու ընտանիքը ձգտում է միայն այդ աջակցությունը պահպանելուն և շատ դեպքերում չի մտածում աշխատելու կամ իր

աշխատանքը գրանցելու մասին: Ցավալիորեն, աշխատելու տարբերակը շատ դեպքերում «պարտվում» է կայուն նպաստ ստանալու տարբերակին: Իրերի նման կարգն ամբողջապես ապամոտիվացնում է մարդուն և նա կորցնում է նախաձեռնություն հանդես բերելու, աղքատությունից իրեն և իր ընտանիքը դուրս բերելու ցանկությունը: Այս խնդրի լուծման առումով խիստ ծանրակշիռ քայլ կլինի ընտանեկան և սոցիալական նպաստի համակարգի արմատական բարեփոխումը: Առհասարակ, նպաստը պետք է տրվի կոնկրետ մարդուն, այլ ոչ ընտանիքին: Այս պարագայում քաղաքացին կաշխատի և երբեք չի մտածի, որ դրա հետևանքով իր ընտանիքը կարող է զրկվել նպաստից կամ դուրս մնալ սոցիալական աջակցության տարբեր ծրագրերից: Հենց այս առանցքային թեզն էլ պետք է լինի ոլորտի բարեփոխումների հիմքում: Քաղաքացու հայացքը պետք է մշտապես ուղղված լինի դեպի աշխատաշուկա: Միայն այս կերպ է հնարավոր աղքատության հաղթահարումը և մարդկանց կյանքի որակի էական բարելավումը: